



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19906

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

Վ1

ՀԱՅ ԱԶԳԻ „ՓՐԿԻՉ“  
ԴԱՇՆԱԿՆԵՐԸ

329.14  
Բ-71

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1931

15 JAN 2010

329-14  
P-71

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

05 FEB 2007

ՀԱՅ ԱԶԳԻ

„ՓՐԿԻՉ“

ԴԱՅԱԿԱՆԵՐԸ

ԽԱ ՀԱՅ ՅՈՒՆԻ  
12353



ԻՄԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ  
1931


22 APR 2013

19906

Խորհուրդների յերկիրը, հսկա Միությունը, հսկա Նյութապես և հեղափոխական-պրոլետարական պայքարի խորությամբ, ապրում ե իր պատմության ամենադժվարին և, միաժամանակ, ամենահերոսական շրջանը — ավարտվում ե սոցիալիզմի հիմքի կառուցումը։ Ամեն որ և ամեն բոպե աճում և զորեղանում ե սոցիալիստական եկոնոմիկան, յերկրի կապիտալիստական տարրերը հետզհետե կծկվում են, սեղմվում, սոցիալիստական յերկրի ինդուստրիան թևավորվում ե, ուսմանում։ Նրա զարգացման թափն անցնում ե այժմ կապիտալիստական, տեխնիկապես ամենազարգացած յերկրի։ Ամերիկայի զարգացման թափից, ավելացած խորհրդային յերկրի ինդուստրիայի պրոլետարական բնույթը։ Հսկայական յերկրի զյուղական տնտեսությունների 60 տոկոսը արդեն յենթարկված ե կոլեկտիվացման։ Այդ պրոցեսն արագորեն, կամովին և վոգերությամբ շարունակվում ե, խորհրդային տնտեսությունները, եկոնոմիկայի բացառապես նոր ձև, աճում են և կատարելագործվում, անսահման չոր տափաստանները ջրվում են, կանչանանում, մրգավորվում և ծաղկում։ Գյուղատնտեսությունը հիմնովին մեքենայացման ե յենթարկվում, մշակման նահապետական միջոցներն արագորեն անհետանում են, տեղի տալով մարդկային ուժին փոխարինող մեքենային։

Լուսավորվում են մութ զյուղերը, վերանում ե մասսաների անգրագիտությունը իրականանում ե ընդհանուր պարտադիր ուսումը, կուլտուրական հեղափոխությունը մտնում ե յերկրի ամենահետամնաց անկյունները, հեղաշրջում ե աշխատավորության կենցաղը, մղում ե նրանց դեպի բարձրագույն ձեի ապրուստը։

Հնգամյա պլանը, վորի «անիրագործելիության» մասին աղակում եյին կապիտալիստական եկոնոմիստները, վորոնց միա-



248 - 93

Уполн. главлита № В-4803 Заказ № 2056 Тираж 4.000

Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,  
Шлюзовая набережная, 10.

նում եյին և յերկրի ներսում այսպես կոչված աջ և ռձախ» ոպորտունիստները, իրականանում ե վհա թե 5 տարում, այլ 4 տարում, իսկ արդյունաբերական վորոշ ճյուղերում 3 տարում և  $\frac{2}{1}/2$  տարում:

Այս հսկայական յերկիրը գեղեցկանում ե նաև արտաքնապես, մեծանում, շքեղանում ու փարթաժանում են քաղաքները, ապրելու համար հաճելի յեն դառնում դյուղերը, թրիքի բուրգերի փոխարեն բարձրանում են սանիտարական պահանջների համեմատ կառուցված մեծ տներ:

Սրտաքին այդ գեղեցկության հիմքում փոխակերպվում են հասարակական արտադրական հարաբերությունները, վերացվում և մարդու շահագործումը մարդու ձեռքով, Խորհրդային Միությունը թևակոխում և արդեն սոցիալիզմի շրջանը:

Խորանում և հարստանում ե ազգային - ինտերնացիոնալ կուլտուրան:

Միության զանազան ազգությունների արվեստները աննախընթաց թափ են ստանում ազգային յերանդավորումով, ազգային կերպավորումով, լեզվով, արտահայտության յուրահատուկ ձևով՝ միջազգային, սոցիալիստական, պրոլետարական բովանդակությամբ:

Ազատազրվում ե դարերի ամենադժբախտ ստրուկը — կինը: Նա դառնում ե հասարակական գործիչ, կուլտուրական լծակ, պետական մարդ, հետզինտե և անվերադարձ ազատազրվում և տղամարդու գերությունից և խոհանոցի հոտից:

\* \* \*

Այս բոլորի հանդեպ համաշխարհային կապիտալը չի կարող անտարեր մնալ, կապիտալիստական դասակարգն իհարկե ունի խորը դասակարգային դիտակցություն: Նա պայքարում է, մղում և վերջին մարտը պրոլետարիատի դեմ, հետեապես և մասնավորապես համաշխարհային պրոլետարիատի ամրոց՝ Խորհրդային Միության դեմ: Նա դինվում է, վոտնահարում, ստում, վոռնում, ինտրիգներ և լարում, սպառազինված ինտերվենցիա յե պատրաստում:

Պատրաստվում ե պատերազմ պարզապես Խորհրդային Միության դեմ:

Համաշխարհային կապիտալը խորապես ըմբռնում ե, վորհնդամյա պլանի իրագործումը մեր կուլտուրայի 100 տարվա յետամացությունը 10 տարվա ընթացքում հաղթահարելը՝ հասնելը և անցնելը կապիտալիստական առաջավոր յերկրներից՝ կլինի սեագույն մահը կապիտալի համար:

Յեզ նա դիմում ե վճռական միջոցին — պատերազմին:

\* \* \*

Համաշխարհային իմպերիալիզմի ինտրիգներին, ինտերվենտական նկրտումներին, կեղծիքներին, խարդախություններին և ստերին խառնվում ե և մեր կյանքում 40 տարուց ավել գործած և ավերումներ պատճառած բուրժուական մի կուռակցություն — Դաշնակցությունը:

Կապիտալների և իմպերիալիզմի ընդդեմ մեծ կոմունայի շարժման մասնակցող զանազան և զարմանազան բուրժուական կուսակցությունների ամենահաղթականը, ամենամիջուկանը և ամենաքրտնաջանը դաշնակցությունն եւ:

Նա ճգնում է, վոր իմպերիալիստական յերկրները շարժվեն, արշավեն Խորհրդ. Միության վրա, վորպեսզի այդ մեծ Միության անբաժան մասը կազմող Հայաստանի Սիէ ընկնի նորից իրենց ձեռքը, վորպեսզի նորից հաստատեն բուրժուական կարգեր, ոկտեն կողոպտել, հօշտել Հայաստանի աշխատավորությունը, վորպեսզի նորից սկսին համատարած ջարդ ու կոտորած, սով ու մահ:

\* \* \*

Յերբ թշնամի դաշակարգերը դրսից արշավանքներ են պատրաստում, նրանց կողմանակիցները, այսպես ասած՝ նրանց դասակիցները, աշխատանում են յերկրի ներսում:

Նրանց գլխին տրված հարվածները ուժեղ են — բոյլէկիկյան — և, տեսնելով վոր իրքե դասակարգ բոլորովին վոչնչանալու վրա են, չափաղանց կենդանանում են և դիմում որահասական մարտի:

\* \* \*

Դաշնակցական տարրերը ևս մեր յերկրում սկսել են աշխատանալ, Նրանք պաշտպանում են պյուղում կուլակին, քաղաքում խանութպանին, նեպմանին: Նրանք իդեոլոգիապես հիմնավորում են կուլակի և նեպմանի պարագրը:

5

\* \* \*

Գոյություն ունի մի կենդանի, վոր անգլերեն կոչվում և  
Տկնկ։ Փոքրիկ կենդանի յե, դաշապահն մի նման։ Հայերենը  
չգիտեմ։ Թերես այդ կենդանին գոյություն չի ունեցել վնչ ժա-  
մանակակից և վնչ ել պատմական Հայաստանում։ Յեթե բառա-  
րանը բաց անեք, յերեւ կասի — ստոր կենդանի ինչ։

Տկնկ-ը ուսում ե կուլտուրական բույսերի արմատները և  
մարդկանց դեմ գոյության կորի և մղում՝ միզելով նրանց շորերի  
վրա։ Այդ կենդանու կեղառոտած շորը սարսափելի գարշահուու-  
թյուն և արձակում։ Մինչեւ վտանգված շորը չայրեն՝ գարշահո-  
ւությունը չի անցնի, մինչեւ անդամ յեթե մի քանի անգամ քի-  
միական միջոցներով լվանան։

Ամեն անգամ, յերբ խոսք ե լինում դաշնակցության մասին,  
յես անմիջապես հիշում եմ Տկնկ-ին։

Մարդկի Տկնկ-ից չվտանգվելու համար մի միջոց ունեն —  
ճանաչել նրան, վորպեսզի գույշը լինեն չկեղառոտվելու նրանից։

Դաշնակցությունից չվտանգվելու համար կա մի միջոց —  
ճանաչել այդ կուսակցությանը՝ պայքարելու համար նրա դեմ։

Չգիտեմ ով և ասել բայց լավ և ասել թէ՝ ճանաչել թշնա-  
մուն, կնշանակե մեծ չափով ապահովել հաղթանակը նրա դեմ։

Դաշնակցությանը ճանաչելու համար պետք ե գիտենալ այն դա-  
նազան կերպարանափոխությունները, վորոնցով նա ներկայացել և  
և ներկայանում ե մեր հասարակական-քաղաքական ասպարիզում։

Նա սոլոսկում ե մեր հասարակական կյանքի ծակոտիները  
բակտերիայի նման — աննշմար։

Դաշնակցությունը մեր հասարակական դարձացման պատ-  
մության մեջ յեղել ե այն կատեգորիան, վոր միշտ հանդես ե  
յեկել գրիմով (դիմակավորված)։

Գրիմի արվեստում Դաշնակցությունն ունի անվիճելի ար-  
ժանիքներ։

\* \* \*

Սոցիալական ինչ խավերից ե կազմված դաշնակցությունը.  
Նրա մեջ դուք կգտնեք — տերտեր, խանութպան, կուլակ, բաղնե-  
պան, վարժապետ, տիրացու, չինովարիկ, յեպիսկոպոս, շահագործող-  
ներ, հարստահարիչներ, քրիստոնեան հանցափորներ, սակայն դրանց  
շարքում նաև մոլոր ված աշխատավորների մի ստվար քանակ։

Այս խայտաբղետ զանդվածին հոգևոր սնունդ մատակարարող  
վիդերները ուրեմն պետք ե յերեան գային յերբեմն «ձախ»,  
յերբեմն աչ, մի յերկրում՝ մի տեսակ, մի ուրիշ յերկրում՝ ուրիշ  
տեսակ ֆրազիոլոգիայով։

Գործել մի ժողովրդի մեջ, վարել նրա քաղաքական ճակա-  
տագիրը, ներկայանալ հասարակության հաղար ու մի գույներով,  
զիգզագներով, կոտրտված, այլասերված և անճոռնի հաղար ու մի  
գծերով և չունենալ «վորոշ դեմք» — այս, հեշտ չե նրան ճանաչել։

Յեկ այսպես մեզանում շատերն են սայթաքում, յերբ գրում  
են այդ կուսակցության մասին։

Խարվելով ահա մի գծից, մի տարապից, մի գրիմից և պա-  
րիկից, մի կեղծ շարժումից, գալիս են այլ յեղբակացության,  
այնինչ պետք ե ունենալ պարզ հիշողություն չմոռանալու հա-  
մար, վոր Դաշնակցությունը ամենաչփացիոլինար ծառան և հայ  
բուրժուազիայի, կապիտալի շահերին։

Վերեւում Դաշնակցության գեմքի մասին անդրադառնալիս,  
դեմքը չակերտների մեջ դրի, վորովիետն նա դեմք ունի, — բացի  
հայկական բուրժուազիայից, զանազան իմպերիաների և բուր-  
ժուազիային ծառայել և այդ մասին յերբեք չհայտարարել։

Կեղծիք։

Հենց նրա ծագումը կեղծիքով և սկսվել — Հայ հեղափոխա-  
կանների դաշնակցություն (հետագայում՝ Հայ հեղափոխական  
դաշնակցություն), Այդ անունը նրա համար եր, վոր Դաշնակցու-  
թյան ծնունդ տվող խմբակը նպատակ ուներ հնչակյաններին և  
ուրիշ հոսանքների ևս միացնել այդ անվան տակ։ Թեև վնչ մի  
կուսակցություն կամ հոսանք չմիացավ այդ խմբակին, այնու-  
ամենայնիվ կոչվեց հեղափոխականների դաշնակցություն։

Լենինն ասել ե — ծելո ու համարի։

Այդ խմբակը կազմակերպվել ե Թիֆլիսի հայ հարուստ-  
ների հետ յերկար իորհրդակցություններ ունենալուց հետո։

Դաշնակցությունը իր ամբողջ գործեցության ընթացքում  
պարզապես հավատարիմ ե մնացել իր ծնունդին։ Նա չի դավա-  
ճանել իր ծնողներին, այս տեսակետից դաշնակցությունը հա-  
րամզադե չե։

Շատ անգամ ենք լսում, վոր ասում են՝ «Դաշնակցությունը  
մարդ չի դառնա», ասում են՝ «նա չի հասկանում իրերի գրու-  
թյունը»։

Հնդհակառակը՝ այդպես ասողներն են, վոր խելքի չեն դալու, այդպես ասողները չեն ըմբռնում մի պարզ ճշմարտ թյուն — Դաշնակցությունը գիտե իր արածը, նա բուրժուազիայի կուսակցություն և և պայքարում և այդ դասակարգի համար: Նա ծառայում և իր դասակարգին հետեւղականորեն, անշեղ:

Ասում են՝ «Դաշնակցությունը կույր է, չի տեսնում»: Ո՞վ ե այն կույրը, վոր Դաշնակցության բաց աչքը չի տեսնում: Դաշնակցությունը շատ լավ և տեսնում: Տեսնում ե, վոր մենք յերկում վերջացնում ենք բուրժուազիային, և տեսնելով՝ սրում և պայքարը մեր դեմ:

Դաշնակցությունը շատ լավ տեսնում ե, թե ինչքան մեծ առաջադիմություն կա Խորհրդային Հայաստանում, ամբողջ Միության մեջ: Նրանք ավելին գիտեն, քան մեր պրոֆեսորներից մի քանիսը: Այդ առաջադիմությամբ Դաշնակցությունը կարող եր հրճվել միայն այն ժամանակ, յերբ այդ բոլորը լիներ նպաստավոր իր դասակարգի, բուրժուազիայի համար, բայց վորովհետեւ այդ բոլորը նպաստավոր և աշխատավորության համար, նա զազագել ե, փրփուր և թափում բերանից: Դաշնակցությունն ունեցել և դասակարգային խորը գիտակցություն, այդ գիտակցությամբ գործել ե, այդ գիտակցությամբ ել շարունակում և պայքարը թե յերկրի ներսում և թե յերկրից դուրս այժմ:

Շատերն ասում են, «Ցեթե Դաշնակցությունն այսպես աներ, լավ կլիներ»: «Եյսպես թե այնպես» չկա: Դաշնակցությունն այսպես կամ այնպես չեր կարող անել, նա արել և այն, ինչ հաճելի յե յեղել բուրժուազիային, ինչ բղխել և նրա շահերից:

Զպետք ե ջանալ համոզել Դաշնակցության, վոր «խելք ունենա, խիղձ ունենա»: (Քաջազնունի և ուրիշներ): Նա խելք ել ունի, խիղձ եր, բայց բուրժուական խելք, բուրժուական խիղձ: Միթե կարելի յե ապրել լենինյան դարում և բուրժուազիային համոզելուն հավատալ:

Բուրժուազիային չպետք ե համոզել պարզապես պետք և կովել նրա դեմ: Սա իհարկե պարզ ե, բայց յերբեմն պարզը շատերի համար դժվար ըմբռնելի յե, և աշխատում են համոզել վոր զգաստանան, հիշեն «մոտ անցյալի խրատական դասերը» (Սուրբայաթյան):

Դաշնակցությունը մոտ անցյալից կարող ե վերցնել մի խրատական դաս միայն — ինչպես անի, վոր բոյլեկիզմից նուրից ծեծ չըւտի: Զգիտեմ դաշնակները վմբքան են խրատվել բայց նրանք գիտեն մի բան — բոյլշեիկները բավ կծեծեն:

\* \* \*

Դաշնակցությունն ունեցել և Թյուրքիայում մի հետեւղական նպատակ — հրավիրել Յելլրոպայի քրիստոնյա իմպերիաների միջամտությունը (ինտերվենցիան) Թյուրքիայի ներքին գործերին: Ի՞նչ եյին անում դաշնակները այդ ինտերվենցիան աջողացնելու համար —

1. Ապստամբեցնում եյին մի փոքրիկ գյուղի մի քանի դոչիների:

2. Տեսոր եյին կաղմակերպում մի վորեւ անհատ պաշտոնյայի վրա:

3. Բանկ եյին կտրում:

4. Կողոպտում եյին:

5. Դինամիտ եյին պայթեցնում:

6. Քուրդ և թուրք սպանում:

Այս բոլորի արյունքն այն եր լինում, վոր կոտորվում եր Թյուրքիայի հայ աշխատավորությունը:

Որինակ, տարիներով զրել և յերգել են դաշնակները Խանասորի արշավանքի մասին: Դաշնակցությունը ողտագործել և այդ արշավանքը ազիտացիայի համար մեծ յեռանդով:

Ի՞նչ եր այդ Խանասորի արշավանքը:

Քուրդ կանանց և յերեխաների կոտորած:

Հետապյում, 1915 թվին, այդ արշավանքին, կոտորածին մասնակցող լիդերներից մեկը, իշխան Հովսեփ Արդությանը ցինիկորեն մանրամասնություններ եր պատմում: Բայց շատ մանրամասնություններ չկային:

Յերբ հարցնում եյին թե

— Իշխան, վո՞նց հարձակեցիք:

Նա պատասխանում եր:

— Վո՞չինչ, պայտաձև մոտեցանք խաղաղ քրդական վրաներին, առավոտ եր, քնած եյին, կանայք, յերեխաներ, վրատվինք և կոտորեցինք, հա, հա, հա:

— Ինչու կոտորեցիք, — հարց եյին տալիս դաշնակցական այն յերիտասարդները, զրեթե պատանիներ, վորոնց հոգում ընկել եր արդեն Դաշնակցության նպատակի և գործնեյության լուրջ կառկածը, իշխանը պատասխանում եր.

— Հիմարություն, հա, հա, հա...

Ի միջի այլոց տեսնում եք, վոր Դաշնակցությունը ուներ իր մեջ և իշխաններ, բայց յեկեղեցականներից: Իշխան Արդությանը Դաշնակցության հիմնադիրներից եր: Այս իշխանը դեռևս մինչև Կուկունյան խմբի կազմակերպությունը, գնացել եր Թյուրքիա խորհուրդ հարցնելու Խարախանյան վարդապետից (հետագայում յեպիսկոպոս) խմբի արշավանքի մասին: Խարախանյանն ասել եր, վոր հարկավոր չե (!), իշխանը հասել եր Դարս, ուր խումբն արդեն պատրաստ եր, և հաղորդել եր վարդապետի կարծիքը, բայց տղերքը չեն լսել...

Ինչու եյին անում — կովկասահայ բուրժուազիան հրում եր նրանց, պետք ե անեյին, բուրժուազիան ուզում եր Թըքահայաստանը, մանավանդ վոր այդ յերկը հանգերի մասին նա առասպելներ եր լսել:

Յեվրոպական իմպերիաների զիալոմատները վաղուց եյին հայտարարել վոր «մեր նավերը չեն կարող նավարկել Սասունի սարերի վրայից», բայց Դաշնակցությունը համառորեն շարունակում եր ինտերվենցիան իրականացնելու անլուր խաղը:

Ինչու յեր անում:

Զեր կարող չանել նա յելնում եր բուրժուազիայի շահերից: Կովկասահայ բուրժուազիան հրում եր նրան: Դաշնակցությունը նրա կուսակցությունն եր և պիտի ղեկավարվեր նրա շահերով:

Դաշնակցական գործիչները, նստած Յեվրոպայում, գրգռում եյին իրենց դոչիներին — արդյունքը լինում եր կոտորած, բանտարկությունն, կախաղան, գլխատում:

«Դրոշակ»-ը հրատարակում եր դոչիների նկարները:

\* \* \*

Թյուրքիայում Դաշնակցությունը վճռ մի փորձ չարագ լեզու գոներու Թյուրքիայի բաղկացոցիչ այլ աղքությունների և թուրքերի հետ:

Զեր կարող անել վորովհետև թե այլ աղքությունների և թե թուրք բուրժուազիայի շահերը դեմ եյին հայ բուրժուազիայի շահերին:

Ինչպես կարող եր Դաշնակցությունը՝ դավաճանել հայրենի բուրժուազիայի շահերին:

Զեր կարող և թուրք և այլ աղքությունների աշխատավոր մասսաների հետ լեզու գտնել ի՞նչ կապ, դասակարգային ի՞նչ կապ ուներ աշխատավորական մասսաների հետ:

\* \* \*

Դաշնակցությունը միացավ 1907 թ. Պարիզի կոնֆերանսուն: Ի՞նչ եր պարիզյան կոնֆերանսը:

Իթթիհատի, թրքական բուրժուազիան-ֆեոդալական կուսակցության, նախաձեռնությամբ գումարվեց մի կոնֆերանս Պարիզում Թյուրքիայի զանազան աղքությունների բուրժուազիան կուսակցությունների մասնակցությամբ: Դաշնակցությունը ներկայացնում եր այդ կոնֆերանսում հայկական բուրժուազիան:

Կոնֆերանսը հրատարակեց մի դեկլարացիա, վոր պահանջում եր սահմանադրություն, Սուլթան Համիդի գահընկեցությունը և Թյուրքիայի բաղկացուցիչ աղքությունների «յեղայրակցություն»:

Հայոտարարվեց ոսմանյան սահմանադրությունը, Սուլթան Համիդը մնաց իր գահի վրա և պատրաստվեց կոտորած տալու Դաշնակցականները և իթթիհատականները համբուրվեցին իրար հետ հրապարակով, բայց յերկու կուսակցություններն ել, առաջին որից իսկ սկսեցին խարդախությունը՝ յուրաքանչյուրը, գաղտնի, զենք եր բաժանում իր անդամներին — իրար դեմ:

\* \* \*

Դաշնակները՝ մտան՝ պարոցները պաշտոններ ձեռք բերելու և նոր սերունդը համապատասխան, աղքային բուրժուազիան վորովդասիրակելու համար:

Այդ պաշտոնների համար «հերոսություններ» գործեցին, սպանություններ կատարեցին:

Նրանք մտան և յեկեղեցիները:

Յերբ Հիսուսին հարցըին թե՛ ո՞յ տղա, վերտեղ եյիր՝ Հիսուս պատասխանեց՝ «հորս տանը»: Ուզում եր ասել՝ յեկեղեցում: Զե՞ վոր

ինքը աստծո մեկ հատիկն եր, իսկ յեկեղեցին ել պապայի տունը:

Դաշնակները յեկեղեցում: Ապա վհրտեղ: Իրենց հորը տունն եր — բուրժուազիայի, ապա և գողանալիք չատ բան կար այնտեղ,

Կարդացէք թրքահայ տաղանդավոր յերգիծաբան Յերվանդ Ույանի «Ընկեր Փանջունին ի Վասպուրական»-ը, այսինքն՝ հայտնի «Ծապլվար»-ի յերկրորդ գիրքը և դուք կտևնեք Դաշնակցության սխրագործությունների ամբողջական պատկերը:

Ավազակության, թալանի մըցում, գոփելու բոցավառ շրջան, Այս գործում հայտնաբերվեցին նորանոր մեթոդներ, այդ մեթոդներն ստեղծեցին նորանոր գործադրողներ:

Կողոպուտին հաջորդեցին դաշնակցական ճակատամարտերը դպիրի, տիրացույի, յերեցփոխի, ժամկոչի և քահանայի համար: Դաշնակցությունն ուներ, իբրև իսկական, տոմսավոր անդամներ — տերտերներ և տիրացուներ, վարդապետներ և յեպիսկոպոսներ:

Նրանց տեղավորել եր հարկավոր, չպետք և խզվեր կապը կաթողիկե յեկեղեցու հետ:

Շատ դաշնակցականներ, մնալով Դաշնակցության անդաքահանա և վարդապետ ոծվեցին: Դաշնակցությունը բողոքեց: Վո՞չ: Զկար վոչ մի հակասություն, ամեն ինչ ներշգահնակ եր:

Դաշնակցության հարձակումները վանքերի վրա բացառապես աշխարհակալական բնույթ ունեցին, գանձերը հարուստ եյին, մագաղաթյա ձեռագրերը մեծ դին ունեցին Յեփրոպայում:

Շատերը կարող են հարց տալ թե՝ ինչու դաշնակները յեկեղեցիները և վանքերը կողոպտում եյին և միաժամանակ պաշտպանում: Բայ յեկեղեցին ու վանքը՝ ինչու համար են: Նրանք պաշտպանում եյին, վոր կողոպտեն: Բուրժուազիան պահեց յեկեղեցիները իբրև թույն, իբրև յեկամտի աղբյուր:

Դաշնակցությունն այդքան բան գիտեր, միամիտներն են կարծում, վոր Դաշնակցությունը կույր և կամ անխելք:

\* \* \*

Դաշնակցական ոճիմը Թյուրքիայում անձունի ձև ուներ:

Մի վորոշ ժամանակ, գեթ արտաքուստ, Իթթիհատի և դաշնակցության հարաբերությունները լավ եյին: Իթթիհատը վորոշ ժամանակ թույլ տվեց, վոր Դաշնակցությունը տարածի իր գոր-

ծնեյությունը: Իթթիհատը նախ կարծույ եր, վոր դաշնակցությունը հայ բուրժուազիային կկողոպաի, դա լավ եր, նա յել ուներ թրքական բուրժուազիայի և չինովիկության շահերի մտահոգությունը: Բայց, չե, Իթթիհատը տեսավ, վոր Դաշնակցությունը բուրժուազիայի մազին չի դպչում, և տվեց գլխին:

Իթթիհատի և դաշնակցության լավ հարաբերությունների ընթացքում ստեղծվեց Թյուրքիայի գավառներում, հատկապես հայաբնակ վայրերում, մի այսպիսի զրություն — Դաշնակցությունը պահանջում եր, վոր ամեն մի վեճ, առանց ոսմանյան դատարան գնալու, քննվի դաշնակ կոմիտեի առաջ Խոկ ի հնչպես եր այդ — ով վոր ավել կվածարեր Դաշնակցության, «արդարության» նժարն անմիջապես թեքվում եր նրա կողմը: Հենց քննության ընթացքում մի քանի անգամ թեքվում եր այդ նժարը: Դաշնակցության «արդարության» նժարը պարել գիտեր:

Այդ նժարի վերջնական կանգ առնելուց հետո՝ գործադրվում եր «արդարությունը» — ծեծ:

Զքավոր ժողովուրդը տուրք եր վճարում յերեք տիրոջ — կառավարության, հողատերերին և Դաշնակցության:

Յերևակայեցեք չքավոր գյուղացու զրությունը: Տուրք պետք վճարեր կառավարության, վոր ամենավերջին հավի ճտի համար տուրք եր վերցնում, տուրք պիտի վճարեր Դաշնակցության (ամենասորոշ տուրքը վորովհետեւ, նայած տղերանց կարիքին, հանկարծ չափը գոխվում եր), տուրք պիտի վճարեյին թուրք, քուրդ կամ հայ հողատերերին:

\* \* \*

Դաշնակցությունը տեսորներ կազմակերպեց, զինեց յերկրի քրեյական տիպերին, պրոֆեսիոնալ գողերին և մղեց նրանց պարլամենտական ընտրությունների ասպարեզը:

Ոսմանյան պարլամենտի դաշնակցական քվեների 80 տոկոսը Դաշնակցությունը ձեռք և բերել զորաճիների (ժառագերիստի թրքահայկական, փոքրասիական վարիանտը) բռնությամբ:

Ահա ընարություն, ե: Հայտնվեց դաշնակ զորաճիների, հրացանակիրների — «հերոսների» — խումբը: Ո՞վ կհամարձակվեր զեմ դնալ այդ արյունարբու «հերոսներին»:

\* \* \*

Դաշնակցական գործիչները, մատի վրա համբվելու բացառությամբ, ապրում եյին հարուստների աներում «Հյուր» եյին նրանց հաշվին: Ապրում եյին նրանք ցինիկ աղաների հետ, շողոքորթում եյին, մանկավիկություններ անում նրանց, լակույժ, կշտանում:

Բոլոր կողոպուտներից ոգտվում եյին և այդ աղաները — չեյին վճարում վանքերին, յեկեղեցիներին և դպրոցներին իրենց անձնական կամ պապենական պարտքը:

Մտնում եյին նրանք հարսանիքատունը, ազգի «փրկության» համար փող եյին պահանջում, վորպեսզի թույլ տան պասկը: Տերտերը նրանց հետ եր, չեր պատկի, մինչեւ դաշնակցության տուրքը չտային:

Մտնում եյին մեռելատունը, փող եյին պահանջում, վորպեսզի թույլ տան մեռելը թաղելու: Տերտերը, վարդապետը նրանց հետ եր — չեր թաղի մեռելը, մինչեւ չլճարեյին Դաշնակցության տուրքը:

Տուրքն ստանալուց հետո դաշնակ պատգամավորները մասնակցում եյին հարսանիքին, ճառում եյին, խմում եյին, կշտանում:

Տուրքն ստանալուց հետո՝ մասնակցում եյին հուղարկավորական տխուր հանդիսին, դամբանական եյին ասում, սգում, «արցունքներ» թափում, նորից խմում, լակում, կշտանում:

\* \* \*

Դաշնակցականները աղջիկ եյին փախցնում և հանձնում այդ աղջկա վրա աչք ունեցող դաշնակցական ընկերոջ:

Դաշնակի մեկը աչք եր տնկում մի աղջկա, ծնողները չեյին տալիս, աղջիկը ինքն ել չեր ուզում: Դաշնակը դիմում եր Դաշն, կոմիտեյին, կոմիտեն որակարգումն եր զնում հարցը, վորոշում հանում, ուղարկում զորաճիներին, փախցնում աղջկան և տալիս դաշնակին:

Այս բոլորը պատճառաբանվում եր Դաշնակցության կողմից, վոր հայ ժողովուրդը ստրկության մեջ կորցրել և կարգապահության զգացումը, այսպիսով պետք և վարդեցնել մասսաները ապագա ինքնուրույն կառավարության որենքներին:

Դաշնակցությունը դիսցիլինար եր իմպերիալիզմի և բուրժուազիայի առաջ և ուզում եր, վոր ժողովրդական մասսաներն ել դիսցիլինար լինեյին իր առաջ:

Դաշնակցությունը այսպես եր փշրում ստրկության դարավոր շղթաները:

Ուրիշ կերպ չեր կարող անել ինքը ստրկության արդասիք եր: Դաշնակցական սեմիմից ամենից շատ տուժողը չքավոր և միջակ գյուղացիությունն եր: Հարուստ գյուղացին նետում եր մի վոսկոր դաշնակի ատամների արանքը, և հետո այդ վոսկորով ծեծում եր իր հակառակորդներին գյուղում, «անձնական» բոլոր գործերը կարգադրում:

\* \* \*

Այս բոլորը մի կողմ:

Այն ժամանակ, յերբ նրանք իթթիհատականների հետ համբուրգում եյին յերկրի ներսում, քարոզում եյին յեղբայրություն, յերկրից գուրս դաշնակցական խմբելը հարձակում եյին գործում թրքական բանակի վրա:

Իմպերիալիզմի գրդումով, հայրենի բուրժուազիայի շահերից մղված, Բոլգարիան պատերազմի մղվեց Թուրքիայի գեմ: Բոլգարական բանակին միացան դաշնակցական խմբերը ընդումուրքիայի:

Կիլիկյան կոտորածն ուրիշ բան չեր, յեթե վոչ դաշնակցական կուսակցության ներքին, ամենաթթու, ամենադարշանոտ նացիոնալիզմի քաղաքականության հետևանքը: Նրանք ներկայացումներ եյին սարքում հայոց թագավորների, իշխանների, ֆեոդալների վոգեկոչումով, ծաղրում եյին թուրքերին և միաժամանակ համբուրգում եյին թուրքերի հետ պարլամենտում, հրապարակներում, մանավանդ բանկեաներում:

\* \* \*

Դաշնակցությունը իր գրիմի արվեստը զարգացրեց նաև Թուրքիայում:

Մինչեւ Դաշնակցությունը աշխարհին ծանոթ եր մի տեսակի գրիմ — ամբողջ գեմքի փոփոխությունը:

Դաշնակցությունը չբավարարվեց այդ անձուկ արվեստից, լայնացրեց, իպեց արագիցիան և հանգես յեկալ նոր գրիմով — մի պլոփիլը ժամանակուն, մյուս պլոփիլը խռոված, չարացած:

Իմպերիալիզմը կերպարանափոխումը ինչ կարող եր առաջ հազարավոր մութ գործերի աջողության համար, անհրաժեշտ եր միաժամանակ յերկու ղեմք:

Յեզ Դաշնակցության ոգնեց մարդկային դեմքի բնական պրո-  
ֆիլային ձեռ:

Միևնույն որը, միևնույն տեղում, յերկու դաշնակ գործիչ  
իրար հետ համաձայնելով, տարբեր «մտքեր» եյին արտահայտում:  
Մեկը շահում եր մասսայի մի մասը, մյուսը շահում եր մյուս  
մասը, Ուրեմն ամբողջ մասսան լինում եր մայր Դաշնակցու-  
թյան հետ:

Ամեն մի յերկում, քաղաքում նստած դաշնակցական կոմի-  
տեն տարբեր եր գործում, նայած թե ինչ եյին թելաղրում տեղի  
բուրժուազիայի շահերը, վորովհետև դաշնակները վճէ մի ժամա-  
նակ չդավաճանեցին բուրժուազիային:

Մենք արդեն ասել ենք, վոր դաշնակցությունը հարամզագե-  
չե գեղի բուրժուազիան:

Սյստես զարգացավ և հեղաշրջվեց գրիմի արվեստը (դերա-  
սանները պետք ե քնության յևնթարկեն այս ձեռ, հետաքրքիր  
ձեռ ե բեմի համար):

Բայց ամերիկան առածն ասում ե — «Չես կարող խարել բո-  
լոր ժողովուրդը բոլոր ժամանակ»:

Որինակ մեր պրոլետարիատին Դաշնակցությունը չկարողա-  
ցավ խարել:

\* \* \*

Գրիմի այս արվեստից, բուրժուազիային ծառայելու բոցա-  
վառ կրից և հազար ու մի այլ պատճառներից՝ առաջացավ  
պատմության ամենազգելի աղետը — թրքահայ ժողովրդի մա-  
սսայական կոտորածը թրքական բուրժուազիայի կուսակցության  
իթթիատի կուսակցության և կառավարության ձեռքով:

Այս կոտորածի պատմությունը գեռաւ չի գրված:

Մարքու լենինյան գիտությունն ե, վոր լույս պետք ե սփոփ  
հայ բուրժուազիայի և թրքական բուրժուազիայի, ապա և Յել-  
լոպայի միջազգային կապիալի ամենամթին խորչերը, պարզելու  
վոճրի, մսագործության, դանթեական յերեւյթների արմատները:

Մի որ, մարքսիստորեն, կզրվի այս պատմությունը:

Կարինի դաշնակցական համագումարը վորոշում ե կայացնում  
չեղոքություն պահպանել թրքուուսական հավանական պատե-  
րազմի առթիվ: Խոտիվ հանձնարություններով մարդ ե ուղարկ-  
վում կովկաս, բայց կովկասյան դաշնակ թեր դեմ ե գնում այդ

16

վորոշման, արդեն հարաբերության մեջ և Վարանցով-Դաշկովի  
հետ Կովկասահայ բուրժուազիայի շահերը, ամենահրամայողական  
կերպով, պահանջում եյին հայերի մասնակցությունը պատերազ-  
մին, ոգնելու ցարական բռնապետության աջողության:

Դաշնակցությունը միշտ կովկասից եր դեկավարվում:

Յել դաշնակցությունը հանդես յեկավ կովկասահայ բուրժուա-  
զիայի յերեք խոյր ներկայացուցիչների հետ — Մեսրոպ յեպիսկո-  
պոսի (բեներանման հոնքերով, խորամանկ, հաշտասեր, վողոր-  
մելի համբան, փառասեր մի յեկեղեցական), Սամսոն Հարություն-  
յանի (կալվածատեր — Դիիլշան — փառատարան, նշանագոր կարիե-  
րիստ, ցածից սողոսկելով, շողոքորթելով հասած մինչև բուր-  
ժուազիայի փեշերը), Ալեքսանդր Խափիսովի (բոլոր ցարերի և  
կովկասյան փոխարքաների վոտները լիզող, նման պալատական  
բաղնեպանի, հայտնի սլաշտոնասեր) և կազմակերպեց կամավորա-  
կան խմբեր թրքական բանակի դեմ:

Պոլսի գաշնակներին ելի հաջողվում ե պատգամավոր ուղար-  
կել Թիֆլիս, գաղրեցնելու շարժումը, բայց բուրժուազիան, ար-  
դեն մարտական, անձամբ անցել եր դաշնակ տղերանց զլուխը և  
դեկավարում եր շարժումը: Կրքերը բորբոքվել եյին, Շահը թե-  
րախում եր նրանց յերազներում — թրքահայաստանը, նրա հա-  
րստությունը:

Կովկասահայ բուրժուազիան գտավ մի մարդու, վոր յերկար  
ժամանակ մաշել եր ուսուական արքունիքի դոները և նրան  
հանձնեց իր շահերի գերազույն պաշտպանությունը:

Դա բժիշկ Յակոբ Զավրյանն եր — Փանատիկ բուրժուազի-  
մոլրատ և գաշնակցական:

Դաշնակցությունը կովկասահայ բուրժուազիայի շահերը  
պաշտպանելու նկրտումներում կորցրեց թրքահայ բուրժուազիա-  
յին, վորովհետև թրքական բուրժուազիայի կուսակցությունը,  
իթթիատը, չխնայեց նաև թրքահայ բուրժուազիային: Խթթիատը  
թրքահայ աշխատավորության, զյուղացիության և արհեստավո-  
րության հետ միասին, կոտորեց նաև թրքահայ բուրժուազիային  
և բոլոր խավերի ինտելիգենցիային:

Միամիտին մեկը կարող ե հարց տալ թե՝ ապա ինչո՞ւ Դաշ-  
նակցությունը, քանի վոր պաշտպանում եր բուրժուազիային,  
այնպես չարավ, վոր կարողանա պահպանել թրքահայ բուրժուա-  
զիային:

2-2056



Այդ միամիտը պետք ե հիշել, վոր Դաշնակցությունը միշտ ել տարբերություն դրել ե մեծի և փոքրի միջև, նա միշտ նախընտրել ե լիզել մեծագույնինը, քան մեծինը՝ Կովկասահայ բուրժուզիան մեծագույնն եր յերկուսի միջև։ Ահա թե ինչո՞ւ դաշնակցությունը չմտածեց թրքահայ բուրժուազիայի մասին։

Կովկասահայ բուրժուազիան հրճվում եր, տեսնելով առաջացող, ընդարձակ ծավալ և թափ ստացող կոտորածը—թրքահայաստանը պիտի գտներ նա առանց տեղական բուրժուազիայի, վորը տեղական հանգամանքով ավելի ուժեղ մրցում կարող եր հայտնարկել, պիտի շահագործեր դժբախտ այդ յերկրի առասպելական հարստություններ պարունակող հանքերը, ընդարձակ հողերը, դոյությունը ունեցող քիչ ու շատ գործարանները։

Չե վոր յեթե անկախ Հայաստան ել չիներ, այնուամենայնիվ, ցարիզմը պիտի գրավեր այդ յերկիրը և ներս արշավող առաջին կապիտալը պիտի լիներ կովկասահայ կապիտալը, այն կապիտալը, վոր պատերազմի ընթացքում, ոգտագործելով պատերազմի պայմանները, ավելի հարստացել եր, ամբարդավանացել կողոպտել եր կովկասայան բանակը մատակարարման միջոցով, լուսացել եր ավելի, քան յերբ և իցեւ։

\* \* \*

Կազմակերպվեց Ազգային բյուրո (այս բառը գաշնակ տերմին ե) սրտառուչ միություն Դաշնակցության, բուրժուազիայի և ցարիզմի (այս անգամ հրապարակով, առանց զրիմի, անամոթությունը զինված)։

Հայ բուրժուազիան և Դաշնակցությունը գործում եյին ձեռք ձեռքի տված, մի մարդու նման, ամեն ինչ համերաշխ եր և ներշողաշնակ։

Ազգային բյուրոն ապագա դաշնակցական կառավարության նախատիպն եր, այսինքն Ազգային բյուրոյում կային դաշնակցական ապագա կառավարության բոլոր խայտառակությունների սպամբը։

Դաշնակցական կառավարության պատմությունը գրի առնողը անպայման պետք ե սկսի այս բյուրոյից՝ գեթ շատ բաների արմատները պարզելու համար։

Ազգային բյուրոն կոռալիցիա յեր, բայց այդպիսի կոռալիցիա աշխարհի պատմությունը չի առնել—վատթարագոյն բնազդների կոսոլցիա։

Ազգային բյուրոյի շուրջն եյին հավաքված բոլոր քրեյական տիպերը, նրանք ման եյին գալիս յարունջիներով և դաշույններով (բառեղերի մասին չեմ խոսում, վորովհետեւ դա միշտ կար)։ Այդ քրեյական տիպերը իրենց հետ, Թիֆլիսի խաղաղ փողոցներում, ման եյին ածում և զինվորական ջրի ամանները և ուզմական քարտեսի դատարկ կաշվե տոպրակները։ Մինչև հիմա ել չեմ հասկացել թե ինչացն եյին այդ ջրի ամանները և դատարկ քարտեսի տոպրակները, ինարկե ջրի ամաններն ել դատարկ եյին։

Այս յարունջավորները, վորոնք, մարդկային մսի հոտից, քթերի ծակերը բաց եյին անում, Թիֆլիսի «Հաշկաչայ»-երի զարդերն եյին։

Նրանք ման եյին գալիս, ընկերանում, մտերմանում բուրժուաների կանանց և աղջիկների հետ։

Յեկ զրանք ինչ սազական զարդ եյին այդ կանանց համար։

Յարունջավորները արյան պատմություններ եյին պատմում, խեղելու, բղզտելու, հոշոտելու պատմություններ։ Բուրժուական տիկիններն ու որիորդները հրճվում եյին այդ պատմություններից։

Այդ տեսակ մի պատմություն պատմողին հերոս եյին հոչակում։

Այդ թվականին հերոսությունն այնքան եժանացավ, ինչ ակտ կարտոֆելը Ղարաքիլիսայում, իսկ հերոսներն այնքան շատացան, վորքան շնորհը Պոլսի փողոցներում, յերբ դեռ միջոցներ չեյին առնվել զրանց դիմ։

Հերոսներ... նախկին բաղնեպաններ, բանտից (քրեյական հանցանքի համար) նոր դուրս յեկածներ, Եջմիածնի արեղաններ, որանց շարքերում նաև մոլորգածներ, հիմարացածներ...։

Ազգային բյուրոն կազմակերպեց կանանց միություն, որիորպաց միություն, և այն, և այն, և այն։

Այս միություններն սկսեցին յեռանդուն հանգունակություններ։ Դաշնակցությունը վոչ մի ժամանակ այսպիսի «պատվավոր կերպով» փող չեր հավաքել։

Դաշնակցության գանձարկը ցնձրւմ եր...

Տղերքը ուտում եյին, լակում, կշտանում...

Դաշնակցական բոլոր գործիչների վոչ միայն ընտանիքները, այլ ազգականները, բիձեքը, բիձեքի փեսանները պաշտոն-

ներ գտան, և զարժանալի՞, բոլորն ել պահեստներում, արոգների  
վրա:

Դաշնակցությունը և նրա հետ վորեն կապ ունեցողը բնա-  
կան հակում ունի գեղի ապրանքը, պահեստը, վերջապես այն  
վերջին իրը, վոր կարելի յէ ուտել կամ վաճառել:

Ազգային Բուրոյին (Դաշնակցություն և բուրժուազիա) կից  
միությունները հավաքեցին շոր, պապիրոս, շոկոլադ, զանազան  
մթերքներ, փող, փող, մինչև անդամ զարդարանքներ Հայաստանի  
փորկության համար, վորոնք կուլ գնացին Ազգային Բյուրոյի (Դաշ-  
նակցություն և բուրժուազիա) կոկորդներից մինչև ստամոքսը,  
Հավաքված պապիրոսներից գեթ մի հատը չհասավ Փրոնտ:

Ազգային Բյուրոն սարքեց ցարի կեղծ հրովարտակ, վոր ԹՌՔա-  
հայաստանը պիտի լինի անկախ:

Յերբ պահանջվեց այդ հրովարտակը, ասին.

— Ալեքսանդրապոլի կայարանում կորել եւ:

Սուտ խոսե՞ն, այսպես խոսե՞ն...

\* \* \*

Ազգային Բյուրոյին միացավ Գրիգոր լուսավորչի աթոռը

Բուրժուազիայի հարսանիքին հոգեորականությունը միշտ  
պիտի կլոր պար բռնի, բայց կաթողիկե յեկեղեցին, այս մո-  
մենտում, բուրժուազիայի հարսանիքում, Փոկստրոտ եր պարում:

Բայց ինչպես եր պարում...

Նրա, այդ յեկեղեցու, պորտը յեռ եր գալիս:

Լուսավորչի աթոռը որհնեց զաշնակցական արյունարրու  
հերոսներին (տափած պատկերներ կան), օհերոսներ», վորոնք  
վոտից մինչև զլուխ զինված եյին, յարունջիներով (բավական  
նման փարաջաների): Այդ հերոսները անցնում եյին Եշմիածնից,  
գնում եյին թրքական բանակի գեմ ավելի և ավելի սաստկացնե-  
լու մեծագույն և մասսայական կոտորածը:

Խաչ և մառզեր լզվոտում եյին իրար:

Արարատի ստվերի տակ խաչը միշտ ել լեզու յե գտել թա-  
գավորների, իշխանների, ֆեոդալների և բուրժուազիայի հետ:

Դարերի մարդանք ե սա, զարավոր Փոկստրոտ:

Դաշնակցական «սոցիալիստ» գործիչները գնում եյին կա-  
թողիկոսի մոտ, չոքում առաջը, համբուրում նրա վեշերը, վոր-  
պեսզի որհնի իրենց սուրը:

Յեկ նա որհնում եր:

Կաթողիկոսն ու Դաշնակցությունը լիզում եյին իրար:  
Մարդկային մսի հոտ եյին առել:

Ազգային Բյուրո...

Մի փոքրիկ գեղզ, բայց գողի համար շատ բնորոշ:

Ամերիկայից յեկած կամավորները իրենց բոլոր չամադան-  
ները պահ եյին տվել Ազգային Բյուրոյին, այսինքն՝ Դաշնակ-  
ցության և բուրժուազիային, ֆրոնտում մեռնողը մեռավ, սպան-  
վողն սպանվեց, վողջերը յետ յեկան — Ազգային Բյուրոն, Դաշնակ-  
ցությունն ու բուրժուազիան, ծախել եյին բոլոր չամադանները  
միշի ամերիկյան բովանդակությամբ:

Պատեհություն եր, փախչում եր, ավելի լավ եր վաճառել,  
թուք կրել, քան հետո ծնկներին խփել:

\* \*

Կոտորածից հետո զաշնակները կաղմակերպեցին զանազան  
Փոնդեր: Կաղմակերպվեց նաև ռմի հայ մի վոսկի» Փոնդը: Շատ ջանք  
թափվեց, վոր այդ Փոնդը չընկնի զաշնակների ձեռքը, բայց ըն-  
կափ: Անբնական կլիներ, յեթե չընկներ:

Այս Փոնդի նպատակն եր՝ ամեն մի քուրղի խոստանալ մի  
վոսկի, յեթե նա համաձայնի մի հայ բերել և հանձնել կովկասյան  
Փրոնտը:

Լեռներում, ձորերում, ախոռներում, քարայրներում կային  
կմախքացած, վայրենացած հայեր, վորոնք աղիողորմ ոգնություն  
եյին ինչըրում:

Թոնդի գործադրման համար Յերզնկա ուղարկվեց զաշնակ-  
ցական հայտնի մառզերիստ Մուրադը, վորյակերից, կոտորածը  
չսկսած, իր անձը ազատելու համար, զաշնակորեն փախել եր,  
մինչև անդամ յերիտասարդ կնոջը և յերեխային լքած իթթիհա-  
տական բանզիտներին:

Ինչպես եր գործադրում Մուրադն այս Փոնդը: Կանչում եր  
քրդերին, խոստանում եր յուրաքանչյուր հայի համար մի վոսկի:  
Թուրդը գնում եր, բերում մի քանի հայերի: Մուրադը յուրա-  
քանչյուր հայի համար քրդին վճարում եր մի-մի վոսկի, հյուրա-  
սիրում (շողոքորթ լեզու ուներ Մուրադը) և ճանապարհ գնում:

Մինչև այսահեղ վոչ մի սրիկայություն չկա:

Քրդի յետեկց Մուրադն ուղարկում էր դոչիներին, սահմանի վրա սպանել տալիս և վճարած վոսկիները յետ բերում:

Ավելի սրիկայություն — հայտարարում էր, վոր ցարական կազակներն են սպանել թալանելու համար: Սկզբում ժողովուրդը հավատում էր, վոր կաղակներն են, ուզում էյին գնալ զանդատվել գարնիզոնում, վորովհետեւ բոլորն ել անհամեր սպասում էյին, վոր քրդերը գնան և իրենց հարազատներին բերեն:

Մուրադը չթողեց, վոր հայերը գարնիզոնին գանգավովեն: — Ռուս կկատղի, մեզ այսուեղ ել չի թողնի, — ասում էր նա:

Քրդերը տեսնելով վոր հայ տանող քուրդը չի վերադառնում, ել հայ չըերին: Այսպես ջուրն ընկավ այդ միջոցը:

Բայց Մուրադն ստացավ փողերը և հազարավոր գաղթականներին, վորոնք իրենց վուներով եյին յեկել Յերզնկա, հաշվեց իրրև փոնդի աղատվածներ:

Յեվ լեռներում, ձորերում, ախոռներում և քարայրներում սպաստանած, վայրենացած և կմախքացած հայերը սպասում եյին մի աղատարար ձեռքի:

Դաշնակ այդ հերոսը, Մուրադը, իբրև «վրեժխնդրություն» բռնեց 16 տարեկան մի թուրք աղջկա և բերեց հետը Կովկաս: Այդ փոքրիկ աղջկը վճ միայն ծառայեց իրեն, Մուրադին, այլ նրա բոլոր դոչիներին:

Ի՞նչ սարսափելի ճակատագիր այդ խեղճ մանուկի ճակատագիրը:

Նոյյնը արին և իթթիհականները հայ աղջկների և մանուկների վերաբերմամբ:

Յերկու կողմից ել գործադրվեցին խժդժությունների և մասպործությունների, մորթոտութերի և դաժանությունների ամենալավի տեսակը:

Յես կպատմեմ մի քանի դեպք միայն: Խորհրդային ընթերցողը թող ինձ ների այս ժամանակակից համար,

Դաշնակները բռնեցին թուրք աղջկների և շարքով անցան վրայից, և հետո ել սպանեցին:

Բռնեցին թուրքերից, կապեցին ծառին և վողջ-վողջ այրեցին:

Բռնեցին մի քուրդ ցեղապետի, բաց արին բերանը, ատամների տակ փայտ դրին, վորպեսզի բերանը բաց մնա և կեղառտեցին բերանի մեջ:

Իթթիհատը բռնեց հայ հղի կնոջ, մերկացրեց, տարավ քաղաքի հրապարակը, զրադ հայտարարեց արգանդի յերեխայի տեսակի մասին — տղան թե աղջիկ — հրապարակով ձեղքեցին հղի կնոջ արգանդը, դուրս բերին յերեխային և հաստատելով տեսակը, զրադը բաժանեցին:

Ել բավական ե:

Կոմունիստական աշխարհում, մեր նոր աշխարհում, անպայման, անխուսափելիորեն, դուրս կգա մի հանճարեղ Դանթե և կհավերժացնի զարգելին, անձոռնին, կեղառութը, ցինիկը — գաշնակը և անկերիթիհատականը:

Սովորեցին իրարից, գործադրեցին իրար վրա:

Բուրժուազիան հրճվում էր, վոր աշխարհը ավելի և ավելի եր կեղառութը, այլանդակվում, այդ պայմաններում շահը ծաղկում ե, փարթամանում:

Յերբ յեղան Կովկասում մարդիկ, վորոնք զեմ գնացին, բողոքեցին, զաշնակները մատնեցին նրանց ցարտկան ժանդարմերիային:

Վերջնու ձերբակալեց այդ մարդկանց, կը քին անցկացրեց մի տախտակ, վրան գրված՝ զավաճան թագավորին և հայրենիքին, ման ածեց փողոցներում, վորպեսզի ամբոխը թքի նրա երեսին: Դաշնակները հավաքեցին ամբոխը, դրգուցին, վոր ավելի և ավելի առատությամբ թքին\*

\* \*

Տեղի ունեցավ վանի գաղթը: Ցարական բանակի գեներալները լքեցին գրավված տերիտորիան և նահանջեցին — մութ մի գործ: Գաղթականությունը լցվեց հղողիր:

Վանի Արամ փաշան ել յեկավ հղողիր — Վանի նահանգապետը, Վանի բոլոր թալանի անզուզական կազմակերպիչը:

Վանեցիներից շատերը «պարոն Արամին» հանձնել եյին Վանում զանազան գոհարներ, թանկագին զարդարանքներ, արժեթղ-

\* Այս գժողովային միջոցին յենթարկվեց հանգուցյալ Պետրոս Հեքիմյանը, Տրապեզոնցի մի շերամաբույժ, վորը հետո 10 տարի աղնվորեն և գիտությամբ ծառայեց պլութարքատին և. Հայաստանում, իբրև շերամաբուժական դործի ղեկավար և դասախոսում եր պետական համալսարանում:

թեր և այլն, կովկասում վերստանալու պայմանով՝ իգդիրի քաղաքային այդում Արամին իրեր պահ տվողները հավաքվեցին և պահանջեցին իրերը։ Արամը մերժեց տալ։ Պահ տվողները զիմագրեցին։ Վերջապես գրպաններում Արամից ստացած վկայականներ, ստացականներ ունեցին։ Արամը պատասխանեց, վոր թղթերը վոչինչ չարժեն, Բարձրացավ դալմաղալ։ Արամը քաշեց զամշին և ծեծեց վանեցիներին։ Միջամտեցին հենց Վանեցի յերիտասարդ դաշնակալականները։

— Պարսն Արամ, ես ի՞նչ բան եւ։

Արամը բացատրում եւ, վոր ճիշտ եւ, յես ստացել եմ այդ մարդկանցից թանկարժեք իրեր և թղթեր, ստացականներ եւ եմ տվել, բայց կուսակցության համար հարկավոր են, վորոշվել եւ չվերադարձնել։

Պարսն Արամի հարազատ դաշնակաները լուռմ են — վորոշված եւ չվերադարձնել — «խայրենիքի խամար պիտք ի»։

Իգդիրի քաղաքային այգու ծեծին ներկա եյին ոսմանյան պարլամենտի անդամ, բանկի հերոսներից, Գարեգին Փաստրմանը (Արմեն — Պարո) և Սիմոն Ներացյանը (Քրուղինյան), վերջինս դաշնակցության ամենից շնորհազուրկ ու տաղտկալի գործիչներից մեկը։

Այսպիսով այդ իրերը չվերադարձվեցին։ Զգիտեմ, կարող եւ պատահել վոր մեկին յերկուսին մի մասը յետ տված լինեն, սա տակտիկա յեւ։

Փողը տղերանց հարկավոր եր, Պատերազմ եր, աշխարհը տակն ու վրա եր լինում, ի՞նչ կլիներ, ի՞նչ չեր լինի։

Հետագայում վանեցիներից մի քանիսը մտածում եյին պարլամենտին՝ դիմիլ և յետ պահանջել այդ իրերը։ Բայց ի՞նչպես կարող եյին անել — Դաշնակցությունը՝ կառավարություն եր և Արամը՝ մինիստր, այսինքն՝ սահմանադրությամբ լեզարցած թալանչի։

\* \* \*

Դաշնակցությունը մտավ նաև Պարսկաստան, հասավ մինչև Շահի պալատը։

Ի՞նչու մտավ Պարսկաստան։

Այս հարցումին պատասխանել եւ Դաշնակցության հիմնակիրներից մեկը, Ռուսումը (Ստեփան Զորյան)։

Վոչ թե միայն հիմա, այլ այն ժամանակն եւ հարց են ավել։

— Ի՞նչ գործ ունեք Պարսկաստանում։

Ռուսումը, անկեղծորեն, պատասխանել եւ.

— Բա ի՞նչ անենք, չե՞ վոր մի բան պիտի անենք. բա տղերքը դատարկ նստեն։

Այս պատասխանը ճիշտ և անկեղծ պատասխան եւ. Այս, տղերքը չեյին կարող դատարկ նստել, պիտք եւ կողոպտեյին, ավերեյին, վերջապես ձրի ապրեյին։

Իսկ ովքեր եյին տղերքը — սոցիալական տուկանքը, մանկավիճակները, միմուները։

Ինչպես տեսնում եք, ըստ հիմնադիր Ռուսումի, Դաշնակցությունը չպետք ե անելիք չունենար, այլ մի վորեւ անելիք պիտի ունենար և Դաշնակցությունը դեռ անելիք ունի — վլասարարություն, ինտերվենցիա, և այլն։

Շատերը կարծում են, վոր, իրը Դաշնակցությունը իրեն կորցրել եւ, քանի զրոշ արժեք ունի այդ «կորցնելը», յերբ այդ բանում «մեթոդ կամ»։

Պարսկաստանում, դաշնակները, առանց աջ և ձախ նայելու, միացան յերկը սոցիալական տականքներին (Պարսկաստանում տականք շատ կա)։

Այստեղ անգլիական իմպերիան նրանց քաջալերեց։ Անգլիական ֆինանսական կապիտալը պատրաստ և հլու դաշնակցութավ հանձին Դաշնակցության։

Յեկ դաշնակ գործիչները Պարսկաստանից, այդ յերկրին հատուկ պրիմիտիվ տրանսպորտով, հարստություն կրեցին և լքցրին իրենց տները Կովկասում, Տաճկաստանում կամ հենց Պարսկաստանի խաղաղ, չփանգված վայրերում։

Դաշնակները, ոգտվելով Պարսկաստանի առանձնահատուկ թուլությունից, տարածվեցին այնտեղ։

Դաշնակցական «հերոսները» հրապարակով պատմում եյին իրենց սխրագործությունները Պարսկաստանում, պատմում եյին գոգնորությամբ...»

Դաշնակները վոչ միայն ոգտվեցին Պարսկաստանի առանձնահատուկ թուլությունից, այլ և Բրիտանական իմպերալիզմի առանձնահատուկ քաջալերանքից։ Քաջալերանք և թուլություն, միացած իրար, տվին Դաշնակցության պարսկական թերին թոփչք։

Վահ մի ընտանիք, վոր հասած և սիրուն աղջիկ ուներ, կամ արժեքավոր խալիչաներ, չկարողացավ իր ընտանիքի տարրական անձեռնմխելությունն ապահովել: Դաշնակները խուժեցին ներս:

Այդ տրագիֆիան շարունակվեց և լեզաւացավ:

Պարսկական Աղբաղատականի առաջնորդ ներսու յեսլիսկոսոս Մելիք Թանգյանը (մինչև հիմա յել այնուեղ ե), պատերազմի ընթացքում պահում եր յերեք զոչի — մեկը շատախցի յեր, յերկուս՝ սալմաստցի: Յեպիսկոպոսը բոլոր մութ գործերն անում եր այս երօնի միջոցով:

Դաշնակցական կոմիտեյի միջոցով պետք եր սպանել մեկին:

Յեպիսկոպոսը գործադրողն եր:

— Տղերք, ձեղ տեսնեմ:

Զեռաց:

Կոմիտեյին փող եր հարկավոր: Յեպիսկոպոսը թե՝

— Տղերք, այսօքան հաղար թուման:

Զեռաց:

— Այսինչ մարդուն, ամբողջ ընտանիքով, ել չտեսնեմ:

Զեռաց:

Ինչո՞ւ այս «հերոսության» եյին մղվում այս զոչիները: Ոգտվում եյին, թալանում եյին, մի մասը իրենց պահում և յուս մասը տալիս Յեպիսկոպոսին և Դաշնակցության:

Այսպես ասած զրանց շնորհիվ լեզալ եր թալանը:

Յեպիսկոպոսը նստում եր Հավթվանում (Սալմաստի հարուստ մի գյուղ): Ուներ մի բարձր պատշաճմբ: Պատշգամբի ներքեւում հավաքվում եյին գյուղացիները զանգան զանգատներով: Յեպիսկոպոսը լսում եր զանգատները, մի քիչ «մտածում», և հրամայում զոչիներին:

— 50 փայտ:

Դոչիները պառկեցնում և ծեծում եյին խեղճ գյուղացուն:

Այս բոլորը, հետագայում, իստացած, սիստեմի վերածված, տարիների մարզանքից ճկունացած՝ իրազործվեց դաշնակ կառավարության որով:

Դաշնակցական կառավարության որով գոյություն չունեցավ վեց մի բան, վոր գոյություն ունեցած չէին եր այդ կուսակցության անցյալ պրատիկայում:

Ի՞նչ խոսք, վոր պատերազմական պայմանները և «ինքնուրույն» հանրապետության պայմանները գունավորեցին և «լավացրին» ամբողջ ապարատը:

Ավելին՝ բոլոր յերկրների դաշնակցականների փորձերը, անջատանջատ տեղի ունեցած ժարդանքները, ժամանակ առ ժամանակ տեղի ունեցած զեպքերի դասերը, բոլոր այդ գործերի և զեպքերի դեմքերը ի մի հավաքվեցին մի վայրում, դժբախտ չայտանում, մի ժամանակում, դաշնակցական յեռագույնի ներքո:

Յերեակայեցեք թե ինչե՛ր կարող եյին տեղի ունենում:

\* \* \*

Դաշնակցությունը, չնայած շատ «հերոսներ» ունենալուն, ելի հներոսներ» եր վորսում:

Մի վորեւել յերկրում, հանկարծ, հոչակ եր հանում մի մարդ (շահագործողի հոչակ): Դաշնակցությունը հատուկ պատգամավոր եր ուղարկում այդ հոչակավորին, վորպեսզի իրեն դաշնակցական հայտարարի, առանց մի բողեք մտածելու թե՝ այդ մարդը ինչ նպատակներ ե հետապնդում, ինչ բանի յե հավատում, ինչ տիպ ե, բավական ե, վոր ահա վորոշ աղղեցություն ե ձեռք բերել վորոշ շնչանում: Հարկավոր ե ներս քաշել:

Առհասարակ պատահում եր, վոր այդ հոչակավորները իրենց հայտարարում եյին դաշնակցական: Նրանց համար ել եր հարկավոր բաղաւ:

Յերբեմն պատահում եր, վոր նոր «հերոսը» մտնում եր սակարկության մեջ (սկզբունքն իրեւ ապրանք), յերկար վեճից հետո գալիս եյին համաձայնության:

Պատահում եր, վոր «հերոսն» համառում եր, ինչո՞ւ իր անձնական ջանքերով ձեռք բերած կիսեր Դաշնակցության հետ, բայց, միհնույն եր, Դաշնակցությունը հայտարարում եր նրան դաշնակցական, նկարն եր առում մամուլում, նրանից կեղծ նամակներ եր հրատարակում:

Այսպես յեղավ և պարսկական ներքին գործերին միջամտող Յեփիմի հետ: Նրա մահվանից հետո ել գեռես վիճում եյին այն մասին թե՝ Յեփիմել զաշնակցական եր թե վոչ:

Սա ցույց ե տալիս Դաշնակցության վորոշ դեմքերից մեկը,

Պատահում եր ավելի կուրյոզը: Դաշնակցական մամուլի մի անդամը, ասենք Յեգիպասի մամուլը, մեկին հայտարարում եր դաշնակցական հերոս, այնինչ միենույն շաբաթվա մեջ, դաշնակցական Պոլսի մամուլը, չկարողանալով համաձայնվել տվյալ «հերոսի» հետ իրեն դաշնակցական հայտարարելու, վորոշում ե կայացրել խփել նրան: Յեվ, հանկարծ, Պոլսի որդանն սկսում եր հայրոյել նրան, ցեխ շաբաթել նրա դեմքին, բայց Յեգիպասի որդանը չիմանալով այդ, միենույն մարդուն գովասանքներ եր շայլում:

Մի քանի որ հետո նա ել եր փոխում բերանը:

Սա Դաշնակցության դեմքն ե, կեղտոտ, գարշելի դեմքը, բայց հասարակական դեմք ե, բուրժուազիային ծառայող մի կուսակցության ցայտուն դեմքը:

Ամաչում եր Դաշնակցությունը այս բոլորից:

Դաշնակցությունն անամոթության մեջ ուներ յերկաթյա տողունություն:

Արդյոք չկային մարդիկ (դաշնակցականներ), վորոնք յերբեմ մտածելին թե այս բոլորը գարշելի յեւ:

Այս, կային: Հենց վոր այդպես սկսում եյին մտածել և զգաւով վոր բուրժուազիային ծառայելու համար ուրիշ միջոց ել չկա, դուրս եյին գալիս կուսակցությունից, իսկ շատ շատերը այնքան մնացին գարշահոտության մեջ վոր բնական դարձավ և շարունակեցին: Իսկ մի քանիսը բավական դարշահոտվելուց հետո դուրս յեկան և սոցիալական աշխարհի համար դարձան անպետք:

\* \* \*

Կովկասում Դաշնակցությունը ընդունեց «սոցիալիզմ»:

Այս առիթով վեճ սկսվեց Դաշնակցության թրքանայ և ոռուահայ թեկերի միջն:

Թրքանայ գործիչները անկեղծ եյին կարծում նրանց սոցիալիզմը և գեմ եյին:

Ռուսահայ գործիչները պատճառաբանում եյին, վոր ցյեթե մենք ուզում ենք կովկասում շարունակել գործել, ուրիշ ճար չունենք, պետք ե սոցիալիստ դառնանք, բայց դա գենես վոչինչ չի նշանակում»:

Այս պարզ խոսքը թրքանայ գործիչները չհասկացան և շարունակեցին վեճը: Մինչև անգամ սպանություններ յեղան, բայց,

վերջի-վերջո, ոռուահայ գործիչները կարողացան զգաստության հրավիրել թրքանայերին, վոր «սոցիալիզմ» ընդունելով Դաշնակցությունը յեղել ե ամենահետևողականը — անել ամեն ինչ և պահել կուսակցությունը, շահել մասսան և ծառայել իր նոլատակներին — բուրժուազիային:

Այս վեճերը չեյին լինի, յեթե, ինձ նման, ոռուահայ դաշնակցությունը սոցիալիզմ բառը դներ չակերտների մեջ: Չակերտները վորդիկ նշաններ են, բայց գրի կուտուրայում նման ուժ չկա:

Այդ բոլորից հետո ոռուահայերը թրքանայերին հասկացրին վերջապես, վոր զա հերթական կեղծիք ե, նոր դիմակ, նոր գրիմ:

Յերբ ինդիրը հետեւողական կեղծիք գուբու յեկավ, թրքանայ թերը լուց:

Վո՞չ մի բուրժուազիան կուսակցություն Դաշնակցությունը կուսակցության չի գերազանցել կեղծավորության մեջ, իսկ Դաշնակցության պատմության մեջ վո՞չ մի ակտ չի գերազանցել կեղծ սոցիալիզմի ակտին:

Դաշնակցությունը, ընդունելով «սոցիալիզմը», այնուամենայնիվ մի բան արավ — սոցիալիզմն աղավաղողների թիվը մի քիչ ավելացրեց: Ասում են «մկան մեղը ջաղացին ոգուտ եւ: Դաշնակցությունը հանդիսացավ այդ մկան մեղը, այդ մեղով ել սողոսկեց Ա ինտերնացիոնալը»:

Դա շատ բնական եր Բուրժուազիայի կուսակցությունն ինչ գործ ուներ սոցիալիզմի հետ:

Դաշնակցական «Դըուշակ»-ի խմբագիր Միքայել Հովհաննիսյանը (Միք, Վարանդյան) — իմալերալիզմին ծառայելու ասպարիզում խոշոր արվեստագետ, մակերեսային ընթերցող, հայտնի ձրիակիր և տաղտկալի գրող — մի ամբողջ շաբաթ հոտվածներ ե գրել կովկասահայ թերթերում, բոլորը գողանալով Մարքսից և Ենգելսից (ինարկե աղավաղելով) առանց աղբյուրները հիշելու և առանց չակերտների:

Գողացած խալիչաների մասին յերբ հարց տայիք դաշնակցականին թե՝ վոր տեղից են այս խալիչաները, նա անմիջապես կապատասխաներ:

— Նվեր եմ ստացել:

Բայց դաշնակցականը ժամանակ չեր տալիս, վոր նվեր տային Գողանում եր:

«Սոցիալիզմ» ընդունելու առաջին շրջանում՝ Դաշնակցության պատահեց մի փոքրիկ դժբախտություն՝ կովկասահայ բուրժուազիան հավատաց: Բուրժուազիան մի պահ կարծեց, վոր Դաշնակցությունը շեղվեց իր նպատակից, դավաճանեց իրեն՝ բուրժուազիային, դուրս եր գալիս, վոր Դաշնակցությունն հարամզագե չե:

Դաշնակցական դործիչները թունդ յելան — վորոշ չափով կտրվեցին նպաստները (քիչ չափով գեռմա ստանում եյին իներցիայի ուժով) — նրանք սկսեցին համոզել, դեռ ընկնել թե՛ դա մանեսովք ե, հերթական կեղծիք, դա հենց ենպեա:

Բայց բուրժուազիան չեր ոգում հավատալ: Յերբ նպաստ եյին ուզում, նա պատասխանում եր.

— Ախպեր, սոցիալիստին ել նպաստ:

Դաշնակցությունը գաղտնի, չակերտները բուրժուազիայի աչքը կոխեց և, հանկարծ, վրա հասան, Դաշնակցության համար բարերախտ, Կովկասում բռնկված հայ թաթարական ընդհարումները: Դաշնակցությունը հանդես յեկավ հայրենի բուրժուազիայի պաշտպան, ցըց սոցիալիզմի թյորիմացությունը, և նորից հայ բուրժուազիան համոզվեց, վոր Դաշնակցությունը հարամզագե չե:

\* \* \*

Կովկասում Դաշնակցությունը գնալով ավելի գունավորվեց, նրա մեթոդն ավելի զարդացավ, կատարելագործվեց... Դաշնակցությունը Կովկասում հայտնաբերեց տիպերի այնպիսի խայտարդետ պատկեր, վոր դարավոր վոչ մի ազգագրական թանգարան չի ունեցել:

Ահա մի ընդհանուր տիպ:

Թիֆլիսում մի խեղճ վարժապետ\* ինչ վոր խոսել և Դաշնակցության դեմ, վոչ միայն խոսել ե, այլ բավական աղմկել և

\* «Վարժապետ» տերմինը պետք է ընդունել վոչ ժողովրդական ուսուցիչի իմաստով, վարժապետն այն տիպն ե, վոր պատահմամբ միայն տերաբեր կամ վարդապետ չի ոծվել, մասնաւում աշխարհական, բայց իր բոլոր նախասիրություններով ու մտածելակերպով հայոց յեկեղեցու հետ կտուգած, առանց իմանալու յեկեղեցու և բուրժուազիայի սերտ կապը: Վարժապետը մի տիպ ե, վոր շատ անգամ ուզեցել է տողատիւ իրենից, բայց չի հաջողվել Սա դժբախտ տիպ ե, վողորմելի, վոր սերում և Գրիգոր լուսավորչից և զոյություն և ունենալու այնքան ժամանակ, վորքան զոյություն կունենա Եջմիածնի աղեցությունը:

(վարժապետի գլխավոր հատկությունը հիարժությունն և, վոր բնականից չունի, բայց ստանում ե իրեն կրթություն):

Դաշնակցական գործիչ Շարաֆյանը (բարձրահասակ, վոսկը բուտ, գեղագլուն, յերկար բեկերով և խորհրդավոր մի մարդ), կանչում և այդ վարժապետին, տանում ե մի կաֆե, նստեցնում ե անկյունի մի սեղանի առաջ, դուրս ե բերում գրպանից մի քանի մարդկային չորացած ականջներ, դնում ե սեղանի վրա և խոժոռած գեմքով ասում:

— Ուզնում ես, վոր քո ականջներն ել ջիբումս ման գամ: Վարժապետը սարսափում ե և անմիջապես խոստանում ե այլ և այդպիսի հանցանքի մեջ չբռնվել:

Զերկարացնենք:

Շարաֆյանն ունեցել է յերկու ոտարազդի պոռնիկ, վորոնք Շարաֆյանի թելազրությամբ և ցուցմունքներով, գայթակեցնելիս են յեղել Շարաֆյանի տաելի մարդկանց և բերում տուն: Գայթակղողները հրճվանքով հետեւելիս են յեղել պոռնիկներին, յեղել պոռնիկներին, յեղել պոռնիկները տեսնելու, դիմավորեայց տանը, փոխանակ մերկ սրունքներ տեսնելու, դիմավորեայս են յեղել մի քանի զոչիներ, վորոնք ձեռաց սպանելիս են յեղել և զցելիս են յեղել հորը, կտրելով ականջները և տալով դաշնակցական գործիչ Շարաֆյանին: Վերջինս սրանով ստուգում եր թե կատարված ե վոճիրը և, միաժամանակ, անձոռնի սակագիմ:

Շարաֆյանը, հետագայում, դաշնակ հանրապետության որով, կողոպտեց պահեստներ և, յերեակայեցեք, այնքան կողոպտեց, վոր Դաշնակցությունը դուրս վանտեց նրան կուսակցությունից: Վերջապես գողության մեջ ել ուցիւնալիկացիա կա, վերջապես ընկերականություն կա:

Շարաֆյանը տղերանց վոչինչ չեր թողել գրեթե:

Դաշնակցությանը այդ մեկը դուր չեկավ:

Սա այն տիպն եր, վորից սերեց մատղերիստը: Բայց այս տիպի մասին հետո:

\* \*

Դաշնակցականները հանդես եյին գալիս Եջմիածնում, Սինությունը, կաթողիկոսական ընտրություններին, հերոսամարտ եյին մղում, ամբողջ մամուլն զբաղվում եր կաթողիկոսական ընտրություններով: Այս կոիկը մղվում եր մշակականների գեմ (վոչ

կեղծավոր բուրժուական հոսանք Կովկասում) — թե վժը թեկնածուն ավելի լավ կծառայի բուրժուազիային:

Դաշնակցության և Եջմիածնի կապը, ինչպես ասել ենք, յեղել և վերին աստիճանի լիրիքական և սրտառուչ:

Եջմիածնի հոգիվորականը և դաշնակցական գործիչը յերազներում տեսնում եյին ֆեռագալական շրջանը — անա զնում են ֆեռագալի դյամիլը, ճորտերը բաց են անում դդյակի մեծ դոները, ներքեցից, գավիթի սալահատակների վրա չոքում են, ֆեռագալը նրանց դիմավորում և պատշպամբից, հրավիրում վեր, կերցնում, խմացնում նրանց: Նրանք իրենց յերազներում տեսնում եյին իշխաններին, հոգոց եյին հանում, վոր, ավաղ, չկան հիմա, վոր ծառայեյին նրանց հավատարմությամբ և «ասպետական» ստրկությամբ, բայց անա կար բուրժուազիան և հոգիվորականն ու դաշնակը, ձեռք ձեռքի, չոքում եյին նրա առաջ, յերկրպագում, ծիծաղում և... լակում:

Վահայն կաթողիկոսական ընտրութուններին, այլ և վորեն ժամկոչի ընտրության խոկ Դաշնակցությունը իր հերոսական բարիկադների վրա եր:

Մինչեւ հիմա եր, գաղութներում, նրանք պայքար են մղում թեմական առաջնորդի, սարկավագի, տերտերի և հոգաբարձոյի ընտրության համար: Ամեն կիրակի գաղութահայ յեկեղեցու բարկում կոիվ և սարքում Հայ Հեղափոխական Դաշնակցությունը:

Սա նորություն չե, եին արադիցիա յե, ծրագրային մաս:

Սա «հոգեոր Հայաստանի» կառավարության սրբակտիկան եւ Այստեղ ժամկոչների և տերտերների պաշտոնները մինիստրական պորտֆելների հմայք ունեն նրանց համար:

\* \* \*

Դաշնակցությունը հասավիր նպատակին — յերկիրը «անկախացավ» և Դաշնակցությունն ստանձնեց հանրապետության դեկավարությունը:

Սա շատ մոտիկ անցյալ ե, չարժե յերկար կանգ առնել, միայն պետք ե ասել վոր Դաշնակցությունը վորոշ զրիմներ բաց թողեց, ավելորդ եր, արգեն զրության տերն եր և իր կեղտոտությունները, վառ գույներով, լեկալ դարձրեց:

Գողություններ և սրբաթյուններ, պես պես, աղջի աղջի, գունավոր, անձունի և պետականացրած:

Նախ և առաջ մառզերիդմը դարձավ տիրականորեն արտօնված յերեւոյթ:

Պետք ե անձամբ տեսնել այդ, կամ ունենալ ամենավառ յերկակայություն պատկերացներու մառզերիդմի լեզար շրջանը:

Պարլամենտի դաշնակցական անդամները գրավեցին հողամասեր և մանավանդ պահեստներ:

Պարլամենտի դաշնակցական անդամը խորունկ սեր եր տածում դեպի պահեստը — յուղ, ալյուր, ամերիկյան հին շորեր, խտացրած կաթ, պանիր, մորթի, բուրդ, բամբակ, աղիք (արտասահմանում Հայաստանի վոչխարի աղիքը շատ բարձր գին ունի), շաքար, բիսկվիտ, մել, թել, մինչև անգամ կանաչի:

Պարլամենտի դաշնակցական վորեն անդամ զերծ չեր այս սիրուց, դաշնակցականը անտարբեր չի կարող զիտել պահեստը: Պահեստների տիրապետության սահմանները չափվում եյին անձնական տառապիկ կամ պակաս կարողություններով: Նրանցից վորմանք ուղղակի ռազմական եյին պահեստներ գրավելու ասպարիցում: Հրացանի կրակից փախչողը, արողի հերոսը, հանկարծ, պահեստի ֆրոնտում զառնում եր զյուցազնական: Որինակի համար՝ նրանցից Շարադյանը, ինչպես տեսանք, դաշնակցական ընկերականությունն ել վոտի տակ առավ:

Ժողովրդական մասսաները սովից կոտորվում եյին, խոտ եյին ուտում, մեռած ձի, շուն, կատու, իսկ մառզերիստները (պարլամենտի անդամ, ուլյայված ոճիքով ինտելիգենտ, ուսուցիչ, տերտեր, բանաստեղծ, նկարիչ, բազնեպահ, հյուրանոց պահող, մսագործ, բուրժուազիա կալվածատեր, խմբապետ և պոռնիկներ) քեփ եյին անում և աղաղակում:

— Зангибасар отвечает.

Ի՞նչ եր այս:

Այսինքն պետք ե հարձակվել Զանգիբարացի թրքական զյուղերի վրա, թալաներ, վերադառնալ մայրաքաղաք, ծախսել, ուտել և լակել:

Դաշնակցական կառավարության որով սեփական անձեռնմխելությանը հետամուտ կանանց համար շատ հաղվադեպ յերեւոյթ եր, վոր մութը կոխելուց հետո, կարողանային տնից գուրս գալ — մառզերիստները վրա եյին տալիս:

Պատահել և գեղքը, վոր մի քանի մասզերիստներ, կանգնած  
Յերեանի բուլվարում, տեսնում են յերկու հանանց, վորոնք անց-  
նում են բուլվարից, ցերեկը Մառզերիստներից մեկը թե՝  
— Այ տղա, են մեկը փոխան չի հագել:

Մյուսը թե՝

— Հազել եւ:

Վորպիսզի վորոշեն՝ հազել եւ թե վոչ, մեկը դնում ե (ինարկե  
յետեկից) վեր եւ վերցնում կնոջ վեշը

Հոհուում են:

Դաշնակցական մինիստրներից մեկը (Վրացյանը) տեսնում ե  
այս գեղքը, մոտենում եւ բարեմտ ժպիտով ասում:

— Գյաղեք, թնչ եք անում:

Այս անգամ միասին են հոհուում: Ու յերեկոյան — այդիներում  
միասին քեֆեր սարքում:

Իսկ միենոյն որերում անզլիական այգում, այժմյան կոմու-  
նարների այգում, այժմյան այդ կուլտուրական վայրում, մեռնում  
ելին գանդրահեր մանուկներ սովոր և հիվանդությունից:

Այժմյան խորհրդային քաղաքացին, մանավանդ պիոներն ու  
կոմունոլիստը, կոմունարների այգում ման դալիս, միշտ պետք է  
հիշեն — վոր այստեղ 1919—20 թ. թ. հայ բուրժուակիայի և  
նրա մարտական կուսակցության վոտքերի տակ կոխուտված  
մանուկ զոհերի վոսկորներն են թաղված:

Պիտի հիշեն, վորպիսզի լավ պայքարեն:

\* \* \*

Դաշնակցական կառավարությունը Գիդա Խատիսյանին ուղար-  
կել եր Դարս տեղական կառավարության գործերը քննելու:  
Գնաց: Քննեց: Վերադարձավ: Զեկուցեց:  
— Դարսում բոլորը զող են:  
Կարձ:

Սրանից ավելի յերկար, խոր գեկուցում վնչ վոք չի լսել:

\* \* \*

Դաշնակցությունը իր կառավարական շրջանում միշտ պա-  
տերազմ մղեց — այդպիս եր պահանջում բուրժուակիայի շահերը և  
նա չղավաճանեց այդ շահերին:

Պատերազմ ներքին ապաստամբ բանվորների և գյուղացիների  
դեմ և արտաքին գրություններում հարեւն աղջությունների դեմ: —  
թուրքերի, ոսմանցիների և վրացիների դեմ:

Անդը կովկասում պայքարում եյին իրար դեմ անդրկովկաս-  
յան յերեք գլխավոր աղջությունների բուրժուազիաների կու-  
սակցությունները — վրաց մենշերմը, թուրք Մուսավաթը և Դաշ-  
նակցությունը:

Այս յերեք կուսակցություններն եւ ամենալկտի միջոցներով,  
պաշտպանում եյին իրենց հարազատ զասակարգերը — յուրաքան-  
չյուրն իր հայրենի բուրժուազիային և այս պայքարից տուժում  
եյին անդրկովկասյան աշխատավորական լայն մասսաները:

Այս յերեք կուսակցությունն ել ունեն զրեթև միենույն պատ-  
մությունը, առավել կամ պակաս չափով:

Մեր մասսաները պետք ե հիշեն այդ մոտիկ անցյալը:

Այժմ այդ յերեքն ել սրտառուչ միության միջ են եմիզը-  
ցիայում, փոխադարձ իրար լիզում են: Վիրավորները միանում  
են իրար, սա բնական որենք ե: Յերբ յերկու իրար թշնամի  
մարդկանց ծեծում են, ծեծվողները բարեկամանում են իրար:

Բոյլշեկիզմը ծեծեց նրանց, եմիզրացիայում նրանք միացան  
իրար՝ իրեւ միենույն փայտով ծեծվածներ:

Ինչու են միացել:

Շատ պարզ — յերկիրը յետ են ուզում, յերկիրը բուրժուական  
են ուզում, ուզում են նորից տիրեն:

Իսկ մեր յերկը ներսում նրանցից մացած տարրերը աշ-  
խուժացել են, սրել են պայքարը:

Մենք կպայքարենք:

\* \* \*

Զանազան են դաշնակցական պորտենուները, վորոնց զլիա-  
վորը մառզերիստն ե իր բոլոր կատեգորիաներով:

Մառզերիստ բառը ծագում ե առել մառզեր ատրճանակի  
տեսակից:

Դաշնակցությունը իր հերոսներին ոժուում եր մառզեր տե-  
սեակի ատրճանակով: Մառզերը համարվում եր ամենաթանկագին  
նվերը դաշնակի համար: Այս ատրճանակը փայտե պատյան ունի,  
վորի վրա արծաթով գրված կամ փորագրված եր լինում դրան

կրող արյունաբրույի անունը: Մառզերը կախված եր լինում դաշտականի մեջքից կամ զրված եր լինում բարձի տակը:

Դաշնակցականները պարլամենտ մտնում եյին ատրճանակով:

Դաշնակը մազուրը սիրել ե, փայտայել, գզվել Մառզերը ոգնում եր դաշնակի բոլոր սխրագործություններին: Առանց մառզերի դաշնակը դաշնակ չեր:

Մառզերը — դա քաղաքականություն եր, մեթոդոգիա, իդեոլոգիա, գոյության պայքարի միջոց, նպատակ, սեր, ամեն ինչ:

Զենքի այդ տեսակից, ուրեմն, մառզերիզմ, վոր կոչվեց այն սոցիալական յերեսությը, վոր հատկանշան եր դաշնակներին՝ տիրապետության շրջանում:

Մառզերիզմը ֆաշիզմի մի տեսակն ե, դաշնակյան ֆաշիզմն ե:

Դրա համար ե, վոր ամեն մի դաշնակցական, այժմ, եմիզը ցիայում, լզվուում ե ֆաշիզմին իրեւ նրա յերկվորյակը:

Հասարակական ամեն մի հոսանք պատմության մեջ մի հետք ե թողնում: Մեր պատմության մեջ Դաշնակցության թողած հետքը մառզերիզմն ե:

Մառզերիստի արտաքին տեսքը ահուելի յեւ:

Սապոկներ, դաշիքե, մեջքին՝ դաշույն, մառզեր և լո դամշի, թյությունի տոպրակ, գոյղացված արծաթե տուփ, շղթայով ժամացույց (գողացված) զղից կախված մինչև գոտին, բլուզ (նայած յեղանակին), փափախ, յափունջի (այս տարազը կարող եր փոխվել ըստ վերջին թալանի): Յերբեմն ամենածայրահեղ սալոնական զգեստի մի մասը հանդիպում եր Զանդիբասարի թուրքի զգեստի մի մասին, թալանը այսպես ե պատահել, բայց վոչինչ, դաշնակցականի հագին այդ յերկու ծայրահեղություններն ել ներդաշնակ եյին: Մառզերիստը միշտ քնատ աչքեր ունի, ապուշի նայվածք, միշտ գետինն ե նայում, գաղտագողի, աչքի պոչովը, շուրջը: Մառզերիստը ծխում ե յերկար մուշտուկով, հազում ե, թքում ուր հասավ, խնչում ե և մատները սրբում զալիֆեյի վրա, քայլում ե դանգաղ, յերբ ձիով չե, միշտ շրջապատված ընկերներով, միշտ խմբավոր, զաղտնի խոսակցություն, սիրում ե գիշերը, ցերեկից չի ախորդում, վազում ե այնտեղ, վորտեղ աղմուկ կա, դամբաղալ, սիրում ե քեֆեր սարքել, հարբում ե, պոռնիկ ե ուզում, պոռնիկի հետ ել վարվում արջի նման: Քիփի ժամանակ ձին թամբված ե լինում, մի փոքրիկ մառզերիստ մոտը կանգնած,

հարբած դուրս ե գալիս, կրակում ե, վախեցնում, փողոցում կոիվ ե սարքում, սկանդալ:

Մառզերիստը միշտ «արժանապատվություն» ե քարոզում, խոսում ե թասիրի մասին, մարդկային լավ հատկությունների մասին, բայց ցինիկ ե մինչև վոսկորների ծուծը, ցինիկ ե ընկերոջ հանդեպ, ամենապատվավոր քաղաքացու հանդեպ: Նրա աչքին ամեն կին պոռնիկ ե, ամեն մարդ գող, դավաճան, ինչպես ինքը:

Այս ե մառզերիստի աշխարհգգացումը:

Մառզերիստը միաժամանակ հտպիտ ե, սարսափելի շոշորթ, սինլքոր, լիզում ե աղաների, հարուստների, լիզերների վոտները, պատրաստ ե նրանց ամեն կերպ ծառայելու:

Մառզերիստը վոճրագործ ե:

\* \*

Մառզերիզմի պետականության որոք շատ մարդիկ վորդեգին այդ ուղղությունը: Վորովհետեւ ուրիշ վահ մի ուղղություն չունեցին, սիրով ընդզբկվեցին, ներգրավվեցին մառզերիզմի կողմից:

Մառզերիզմի բնագավառը ընդլայնվեց, հարստացավ:

Մառզերիստը կարող եր լինել հետազյում, ինտելիզենտ, համալսարան ավարտած, քաղաքակրթված (!) կուլտուրական մարդու արտաքին բոլոր նշաններով: Սիրում եր մառզերիստինտելիզենտը կամ ինտելիզենտ մառզերիստը բանկետներում ճառեր ասել:

Սա ել արյան ծարավ եր, կողոպտում եր, սպանում, թալանում, սրիկայություններ անում:

Այս տիպը կարող եր մի հաջող թալանից հետո՝ զուրս գալ և ճառ ասել սոցիալիզմի մասին, արվեստի մասին, գիղեցկության, ճաշակի, քաղաքակրթության մասին: Գիտեր ֆրազներ:

Յերբ միրուքը սկսում եր սպիտակել, ներկում եր:

Գիշերները վերև նկարագրված մառզերիստի տիպի հետ եր միշտ լինում:

Մառզերիստը կարող ե լինել և պարլամենտի անդամ, ինչպես ասացինք, յերկաթյա թելերով կապված պահեստների հետ, պարլամենտական ակտով հողեր եր գրավում, ազարակներ, կազմակերպում եր անձնական տրանսպորտ ալյուրի, խալիչաների, կազմի, բրդի և մեծաքանակ կարտոֆելի համար, եմիսարներ եր

ուղարկում զանազան գյուղեր, վորոնք զնում, պայքար եյին  
մղում և լցնում պարլաժենտի անդամի շտեմարանը:

Մառզերիսաը կարող եր լինել և «բանաստեղծ»:

Գոյություն ունի մառզերիսատական բանաստեղծություն:

Այս տիպն ապրում եր այն միջոցներով և ձևերով, ինչ միջոցներով և ձևերով ապրում եյին մառզերիսատ ինտելեգենտը և մառզերիսատ պարլամենտի անդամը, միայն ավելի փոքր մասըշտաբով:

Փոքր մասշտաբը չպետք է վերադրել ընդհանուր որենքի, այլ բանաստեղծի անձնական անկարողություններին՝ «գոյության ահավոր պայքարում»:

Սա «բանաստեղծություններ» եր գրում ամենաքաղքենի, ամենալկտի, պոռնիկ կանանց ալբոմներում հայրենիքի և սև աչքերի մասին:

Մառզերիսատները խորը բարեկամական կապեր եյին պահում մրգավաճառ, մասվաճառ, վիշնա և կալբաս ծախող խանութպանների հետ Յեկ այդ խանութպանների զավակների կնքահայրերը լինում եյին անպայման մառզերիսատները:

Այդ խանութպաններն իրենք մառզերիսատներ եյին:

Պուսեցի հոսհոսը, վորը հրացանի պայթյունի ձայն լսելուն վախիցը քրոջը փեշի տակ եր պահվում, գնալով դաշնակցական հանրապետության սահմանները, մառզերիսատ եր դառնում:

Այսպես անվերջ եր այս տիպի (մառզերիսատների) զաշնակական հանրապետության շրջանի զարգացումը:

Յերբ զաշնակցական բյուրո-կառավարությունը ժողով եր գումարում և զնում Հայաստանի քարտեզը սեղանի վրա և մատիտով նշանակելով Հայաստանի թրքական գյուղերը և վորոշում կայացնում «սրբել»—ամբողջ կառավարությունը կոլեկտիվ մառզերիսատ եր:

Մառզերիսատական հանրապետություն, մառզերիսատական իրավակարգ — ֆեոդալական ճորտության պետք եր յերանի տալ:

Մառզերիսատը (այսինքն դաշնակցականը) և բաղնեպան եր, և հյուրանոց պահող, վորոնք աղջիկներ եյին պահում և տոկոս տալիս կոմիտեյին...

Այս տիպի հյուրանոցներում գումարվում եյին դաշնակցական ժողովները, այս տիպի հյուրանոցներից եր դեկավարվում հայոց ազատազրական շարժումը:

\* \* \*

Դաշնակցականը և տերտեր եր, վարդապետ, յեպիսկոպոս, մինչև անդամ արք (այսինքն՝ կեղակի ավագը), վորոնք ծառայում եյին աստծուն և բորժուազիային: Սրանք ընկերանում եյին մառզերիսատներին, զինվոր եյին զնում իրենց փարաջայով (յափունջիփարաջա), ողջնում և գովարանում ամեն տեսակ ցինիկական (շնական) արարքներ, հյուրասիրվում եյին բաղնեպանների և հյուրանոց պահողների կողմից, խստիվ ընտրություններ եյին կատարում մարուսիանների և վիրագուների միջն, հարբում եյին, պարում և առավոտյան սուրբ պատարագ մատուցանում հայոց դարավոր կաթողիկե յեկեղեցում:

Հայ յեկեղեցականը, պայքարի ընթացքում, դարավոր ցինիկ կաթոլիկ յեկեղեցուց, պատից, սովորել եր ամեն տեսակի արիկայություններ, վրան ավելացրած իր սեփականը — արևելյան սրիկայությունը — միջավայրին հատուկ, ինքնահատուկ գունագորումներով:

\* \* \*

Անդրադառնալով մառզերիսատի զանազան տիպերին՝ պետք են հատկապես շեշտել մեկին — Գարեգին Նժդիհին:

Գիտնականը, յերբ ովկեանի ջուրն ե քննում, նա քննում է միայն մի կա իլը և հասնում է գիտական յեղբակացության:

Ներկայացնելով Նժդիհին, մենք փորձ ենք կատարում քննել մի կտոր կեղտը (գիտության մեջ զգվելը՝ վոչ-գիտական և համարվում) և տալ ամբողջական պատկերը:

Ինչու համար հատկապես Նժդիհին — վորովհետեւ նա Դաշնակցության «կարկառուն» դեմքերից մեկն է:

Յեկ կեղտու դեմք:

Փողոցային լրիվ տիպ:

Գարեգին Նժդիհ — զաշնակցական ամբողջական տիպ — գող, սրիկա, մուրացկան, վաճրագործ, ծույլ ձրիկեր, արյունարբու և լիրիքական-շնական:

Վահ մի բնական աղետ — յերկրաշարժը — չկարողացավ այնքան մեծ աղետ պատճառել Զանգեզուրին, Զանգեզուրի աշխատավոր գյուղացիության, վորքան այս կազմակերպված սրիկան:

Այս տիպը մի այնպիսի տիպ ե, վոր, յեթե ամբողջ Դաշնակցությունը, հանկարծ, անհետանա, կարող ե, մեն մենակ վերականգնել Դաշնակցությունը իր մանրամասն կեղտոտություններով:

Մի դեպք. Նժենը կանչում ե իր ըմբուտ զինվորներից մեկին, շոյում և նրան, ժպտում, ասում. «Դու իմ զինվորների մեջ ամենաքաջն ես, ամենասիրելին, դու միայն կարող ես այս գրությունն հանձնել այսինչ խմբապետին»:

Նամակը տալիս ե, զինվորը թոշում ե քաջալերված սպարապետի քաջալերանքից:

Այս նամակում զրված ե յեղել:

«Սիրելի Հակոբ, նամակս ստանալուդ, անմիջապես կվերջացնես գրաբերին, ավելորդ ե, մեղ նեղություն ե տալիս»:

Յեվ, ինչ եք կարծում, «սիրելի Հակոբը» չի վերջացնում գրաբերին, խրատում ե թե՝ այ, ևսպես ե, խելոք մնա, թե չե... (Դուրզեն Հակոբյանի — բանվոր Ռաշիդի դեպքը):

\* \* \*

Բոլոր դաշնակցական զրողները, Ահարոնյանից սկսած, թռակ եյին ստանում Թիֆլիսի, մանավանդ Բագվի և Մոսկվայի հայ կապիտալիստներից:

Կապիտալիստները տալիս եյին իբրև «վողորմություն», իբրև «բարեգործություն», (կապիտալիստները յերբեք չեյին ասում, վոր իբրենք մտավորականներին վարձատում են նրանց ծառայությունների համար) բայց դաշնակ զրողներն ստանում եյին իբրև վարձք:

— Դա հայ հարուստի պարտականությունն ե, — ասում եյին նրանք:

Այս բանում դաշնակ զրողներն արդարացի եյին, իբրենց թափած արյուն-քրածնքի վարձքն եր, վոր ստանում եյին:

Ծառայում եյին կապիտալիստներին և վերջինները պարտական եյին վարձատրել նրանց:

Ամեն մի զրող ուներ իր փոքրիկ լակեյը, այսինքն մեկը, վոր միշտ հիշեցներ հարուստին, զգուշությամբ (անպիտան կապիտալիստը հանկարծ կարող եր զայրանալ) թե՝ պետք ե թոշակողարկել այսինչ զրողին, Հարուստը կարգադրում եր գործերի վարիչն և նա ուղարկում եր, պահանջելով ստացական:

40

\* \* \*

Վերջապես յերկար ե այս կեղտոտությունների շարքը և հոգնեցուցիչ, բայց յես պետք ե հիշեցնեմ մի վոճիր ևս:

Դաշնակցականները Հայաստանում, քաղաքացիական կոիվներին, ժայռից ձորը գլորեցին կոմունիստների, նրանց, վորոնք կովում եյին աշխարհը փոխելու համար, նրանց, վորոնք պայքարում եյին Կոմունիստական կուսակցության լողուսպների իրականացման համար:

Վերջինն ե արդյոք այս նրանց վոճրագործության:

Վաչե ելի են ուզում անել:

Ի՞նչ ե ինտերվենցիան:

Այսպիսի արարքների ավելի կատաղի կրկնումը:

Յերկրի ներսում գտնված թշնամի տարրերի աշխուժացումը և արտաքին աշխարհում իմպերիալիստի առաջ արած մանկավիկությունների բոլոր փորձերն այս ոեժիմի հավերժացման ջանքեր են:

Բայց նրանք չեն տեսնի...

\* \* \*

Մենք ունենք մի մեծ հարց, շատ ցավոտ հարց, դառնազին հարց — Դաշնակցության մեջ զեռևս գոյություն ունի, իհարկերկրից դուրս, մի տարր, վոր անդիտակցորեն գնում և Դաշնակցության յետելից:

Դա գաղութահայ աշխատավորության մի մասն ե:

Ահա այս տարրին մենք պիտի կարողանանք աղատազրել բուրժուազիայի մարտական կուսակցության ճանկերից:

Գաղութահայ աշխատավորության, բանվորության այն մասը, վոր զեռևս հանդուրժում ե մնալ դաշնակցական շարքերում, դժբախտ և անգիտակից տարր ե, պետք ե փրկել այդ տարրին, պետք ե աղատազրել նրան:

Ոմեն մի գաղութահայ բանվորի պարտականությունն ե լուրջ կերպով քննադատության յենթարկել Դաշնակցություն կուսակցության պատմությունը և տեսնել, վոր այդ կուսակցությունը ծագումով եյերկար տարիների «հեղափոխական» գործնեյությամբ յեղել ե բուրժուազիայի հետ և բանվոր դասակարգի հակառակ:

Միայն այսպիսի լուրջ վերաբերմունքով կարող ե աղատազրվել գաղութահայ բանվորը իր դասակարգային թշնամու ճանկերից:

41

Գաղութահայ բանվոր, այս խնդիրը քննիր մեն մենակ, արտաքին բոլոր ազդեցություններից հեռու և ան թե ինչ և յեղել անցյալը և ինչ և այժմ, հաշվիր այն բոլոր փողերը, վոր գործարանից ստանալուց հետո դրել ես սրիկա դաշնակ գործիչի գրպանը: Ի՞նչ բանի դեմ ե գործածվել — քո դասակարգի դեմ:

Դաշնակը կապիտալիստի լակեյ ե, լավ իմացիր:

Թերթիր պատմությունը, ինքնուրույն կերպով ուսումնասիրի այդ պատմությունը և կդառնես լուսավոր ուզին, դա պըոլիտարական հեղափոխության ուղին ե:

Գաղութահայ բանվոր, հավատա լենինին:

Այժմ նրան հավատում են Զինաստանից մինչև Ափրիկեյի հեծող նեգրերը, հավատում են նրան ավագուտներում, տունդրաներում, բոլոր խրճիթները, բոլոր վարձու աշխատանքով շղթայվածները, բոլոր արտադրողները նրան են թռչում:

Գաղութահայ բանվոր, փրկության միակ ուղին լենինի կուսակությունն ե. հավատա նրան:

Հավատա նրան, վորի կրունկների տակ փշրվեցին աշխար ամենավայրենի բռնապետության վոսկա թագերը:

Փշրեցէք թագերը, փշրեցէք ցիլինդրները, փշրեցէք մառագերները:

Մարքսն ասում եր, վոր պիտի փոխել աշխար հը:

Ո՞վ պիտի կարողանա փոխել և փոխում ե աշխարհը:

Պրոլետարիատը:

Աշխարհը փոխելու համար պիտի մաքրել հինը, փտածը, անձոռնին, այլանդակը:

Բանվորն ե, վոր պիտի վերացնի անձոռնին և այլանդակը:

Յեկա ահա գաղութահայ բանվորության մի մասը գնում ե անձոռնին և այլանդակի — Դաշնակցության հետ:

Մարդ շնմում ե, յերբ մտածում ե այս անդիտակցության մասին:

Դաշնակցական ինտելիգենցիան, բուրժուական, սեփականատեր տարրը հետևողական ե, նա գնում ե բուրժուազիայի հետ, բայց դու նրանց հետ գործ չունես, դու կույր գործիք ես բուրժուազիայի ձեռքում:

Նրանք աշխատում են քեզ դարձնել ինտերվենցիայի զինվոր, արյունարրու հերոս, հո իրենք չեն կովելու, ելի քեզ են շոյելու,

քեզ են խաբելու, քեզ են ուղարկելու գրոնտ այս անգամ բացառաբար պրոլետարական բանակի դեմ:

Դաշնակցությունը, այսինքն բուրժուազիան, կարուտ ե քո մսին, քո ֆիզիկական ուժին, քո քրատինքին, աշխատանքին:

Մի ծախի քեզ նրան:

Միացիր, առանց այլ և այլի, թքելով քո դասակարգային թշնամիների վրա, միացիր վարձու աշխատանքի սիստեմի դեմ մղվող միջազգային պայքարին, միացիր շահագործվող նեգրին, շահագործվող ֆելլահին, շահագործվող թուրքին, շահագործվող ամեն մի տարրի:

Այսպես ե ասել լենինը:

Այդպես արավ մեր Միության հաղթական պրոլետարիատը:

Յեկ ահա ազատ ե նա բուրժուազիայի կրոնկներից, ընդհակառակը՝ բուրժուազիան, մասնավոր սեփականատերը նրա կրոնկների տակ ե:

Միլիոնավոր բանվորներ լսեցին մեծ իլյիչին, գնացին նրա և նրա կուսակցության յետելից, փշրեցին ստրկության շղթաները, քանդեցին բուրժուազիայի բաստիլներն ու գահը:

Յեկ ահա լենինյան այդ պրոլետարիատը կառուցում ե սոցիալիզմ:

Լենինյան միլիոնավոր բանվորները պայքարում են և ձեզ համար, գաղութահայ բանվորներ, առանց նկատի առնելու թե ինչքան քիչ և ձեր թիվը, դուք պրոլետարական վորակ եք, դուք դասակարգային արժեք եք:

Հետևեցէք ԽՍՀ Միության պրոլետարիատին, միացեք նրանց պայքարին:

Իմպերիալիստները, վորոնց յերկրում դուք աշխատում եք, տանջվում, արյունաբերում, պատերազմ են պատրաստում մեր կոմունայի դեմ:

Դուքս յեկեք և պաշտպանեցեք ձեր աշխարհը, ԽՍՀՄ, դա ձերն ե, պրոլետարիատի, համաշխարհային պրոլետարական դասակարգի սեփականությունը:

Մարքսն ասում եր, «բացի շղթաներից, վոչինչ չունեք կորցնելու»:

Շատ բան ե կախված գաղութահայ բանվորներից: Բանվորներն են, վոր կազմում են մասսա, թողուցեք այդ կուսակցու-

թյան անմասսա, թող միայն լիդերները յերկրպագեն բուրժուա-  
զիային և կապիտալին:

Զի յեղել մի որ, վոր դաշնակցությունը հաշիվ տա իր արած-  
ների մասին:

Զի յեղել մի որ, վոր ձեր ձայնն արժեք ներկայացնի իր  
գործնեյության համար:

Հեռացեք նրանից, ամրացրեք համաշխարհային պրոլետա-  
րիատի ամրոցը՝ ԽՍՀՄ:

Ահա լուսավոր ուղին, ահա պրոլետարների միակ ուղին, ահա  
լենինյան ուղին:

Դեպի բուրժուազիայի խորտակում, դեպի կապիտալի խոր-  
տակում և դեպի կոմունիստական իրավակարգ:

Իմպերիալիստական պատերազմի դեմ դասակարգային պա-  
տերազմ, իմպերիալիստական պատերազմի դեմ քաղաքացիական,  
վարձու աշխատանքի շղթաները փշող պատերազմ:

\* \* \*

Յերկու խոռք ևս:

Մեզանում դեռևս գոյություն ունեն ինտելիգենտներ, վորոնք  
«չեղոքություն» են պահում, այսպես կոչված լոյալություն:

Այդ լոյալությունը, մանավանդ ուկրանստրուկտիվ շրջանում,  
անհանդուրժելի յեւ:

Ինչու:

Կառուցվում ե սոցիալիզմ — փոխվում ե հասարակական, քա-  
ղաքական, տնտեսական բոլոր փոխարարերությունները, փոխ-  
վում ե քաղան, փոխվում ե վերնաշենքը:

Հնից վոչինչ չի մնալու, ամեն ինչ պիտի լինի նոր, սոցիա-  
լիստական:

Խորտակում են դարավոր հասկացողությունները:

Հեղաշրջումը հիմնական ե, հսկայական, վարից վեր, անողոք,  
վճռական, համառ:

Ով պրոլետարիատի հետ չե, նրա դեմ ե:

Այդ «լոյալության» առաջագած են, պարզ ասած, լոռո-  
ների յերկու կատեգորիա:

Առաջին լսողները նրանք են, վորոնց վերաբերմունքը բա-  
ցասական ե, ապրում են մթին քողերի յետեւ: Թեև այդ քողերը —  
հնչքան ել մթին — թափանցիկ են...

Բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, արտասահմանում, հան-  
գես յեկավ պայծառ վերաբերմունքով դեպի սոցիալիզմը, վոչ  
միայն դեպի սոցիալիզմը ընդհանրապես, այլ սոցիալիզմի կառու-  
ցումը Խորհրդային Միության մեջ:

Մեծ տարբերություն կա այս յերկուսի միջև:

Շատերը մեզանում հանդես են յեկել աղաղակել են իրենց  
վճիռ վերաբերմունքը դեպի սոցիալիզմի կառուցումը:

Շատերը վոչ միայն աղաղակել են, այլ և ակտիվ կերպով,  
յուրաքանչյուրն իր ասպարիզում, ոգնել են սոցիալիզմի կա-  
ռուցման:

Այս յերկուսի միջև ել տարբերություն կա:

Լոողների յերկորդ կատեգորիան այն կատեգորիան ե, վոր  
«կողմնակից» ե (այս վերջինը նրա խոսքն ե) բայց ելի լոում ե:  
Ինչու յեւ լոում:

Այդ կատեգորիան չի ուղի դրանով իր կապը խզել ար-  
տասահմանի հետ, բուրժուական լագերի հետ:

\* \* \*

Պատերազմի առաջին որերին Բրիտանական իմպերիան, մի-  
լիոնավոր որինակներով, բաց թողեց մի գունավոր բացիկ: Այդ  
բացիկը ներկայացնում եր մի հասակվոր մարդ, նոտած աթոռի  
վրա, թերթ կարդալիս և ծիսելիս, առաջը կանգնած 12—15 տա-  
րեկան վորդին, վոր անձկությամբ հարցնում ե հորը, ընդհատե-  
լով մեծ պատերազմի պատմության ընթերցումը:

— Պապա, իսկ դու ի՞նչ արիր այդ պատերազմում:

Հայրը չեղոք ե մնացել, գլուխը կախում ե տխուր և ամո-  
թից չի պատասխանում:

Անմիջապես շուռ տանք այս բացիկի նշանակությունը սոցիա-  
լիզմի պատմության կառուցման տեսակետից:

Մոտիկ ապագայում այսորվա «չեղոքների», կամ այսպես կոչ-  
ված՝ «լոյալների» զավակները պիտի մեծանան, կարդան և հարցնեն:

— Պապա, իսկ դու ի՞նչ արիր գեթ հնգամյակի վճռական  
տարում:

Ի՞նչ պիտի պատասխանես դու, վողորմելի հին մարդ, վոր  
դողում եյիր բուրժուական լազերի հետ կապը խզելուց, ի՞նչ պիտի  
պատասխանես, այդ նոր, առողջ, անշահախնդիր, կոմունիստա-  
կան մարդուն:

Ի հարկե, գլուխդ պիտի կախես տխուր:

Թերեւս զղջաս, հետին թվով յելես և աղաղակես:  
Գրոշ արժեք չունի:  
Բայց մենք ապրում ենք Յերբորդ - վճռականը:  
Յերորդ վճռական տարում բոլոր հարցերը այլ կերպ են  
դրվում:

Զեզոքություն, «լոյալություն», — այդ միանույն ե թե սոցիա-  
լիզմի կառուցման գեմ ես:

Սոցիալիզմի կողմանակից և ակտիվ աշխատող սոցալիզմի կա-  
ռուցման — դա հասկանալի յե:

Սոցիալիզմի թշնամի, արտաքին ինտերվենցիային կողման-  
կից և ներսից նպաստող, դա ևս խորապես հասկանալի ե:

Գնալ դեպի պրոլետարիատը, կյանքը, ապրելը հաճելի զգալ  
նրա հետ, պայքարել նրա հետ, ախրել նրա հետ, վոգեորգել  
թռչել նրա հետ, միասին լինել նրա հաղթանակներում և աշ-  
խատանգում, գնալ անշեղ, հավատով, մտքի և մարմի բարձրա-  
գույն լարվածությամբ, միշտ հարգելով աշխատանքը, հաճույք  
զգալով միայն ինտենսիվ, քրտնաթոր աշխատանքում — ահա ժա-  
մանակակից ինտելիգենտի բարձրագույն տիպը:

\* \* \*

Ճիշտն ասած՝ այս փոքրիկ գրքույկը գրեցի մեր նոր սե-  
րունդի, այսպես ասած, փոխարինողների համար:

Այդ նոր սերունդը չի տեսել Դաշնակցությունը: Այժմյան  
20 տարեկանների մեջ կան վոմանք, վորոնք Դաշնակցության  
հանրապետական շրջանի սարսափները, յերկի, դեռևս զգում են  
իրենց վոսկորների մեջ, բայց շատերը մոռացած կլինեն:

Եյսպես ե մարդկային բնավորությունը — յերբ լավը տեսնում  
են, մոռանում են հին վատը, բայց լավ ե վոր այդպես ե, յեթե  
վոչ մենք, բոլորս ել, ամեն որ, ապրելով հին կոշմարը, յերսի  
մինչև հիմա գժվել եյինք:

Յես այս գրքույկը գրեցի վճէ թվելու, այլ պատկերա-  
ցնելու համար: Պատմության հերթականությունն անզամ ինձ  
չհետաքրքրեց, կարեռն այն ե, վոր մեր նոր սերունդին պատ-  
կանող ընթերցողները կարողանան պատկերացնել անցյալը,  
այժմյան ծանրագույն խնդիրները հասկանալու համար, մինչև  
վոր կտանք դաշնակների իսկական արյունոտ պատմությունը:

Դաշնակների մասին գրողը պետք ե բաց անի մեծագույն  
կտավը, վորպեսզի կարողանա ընդգրկել նրանց ստեղծած ամ-  
բողջ գժուխքը:

Նոր սերունդի համար գրեցինք առայժմ այս սողերը, վոր նա  
կարողանա հակադրել և ըմբռնել մեր հերոսամարտը համաշխարհա-  
լին իմակերիալիզմի և կապիտալի դեմ և այդ հերոսամարտի կա-  
պակցությամբ հայ բուրժուազիայի կուսակցության՝ Դաշնակցու-  
թյան սրիկայությունն ու լակեյությունը իմակերիալիզմի համար...

Իմակերիալիզմը պատերազմ և պատրաստում ԽՍՀՄ-յան  
դեմ — հին, փտած, իր կուլտուրայի վերջալույսը բոլորող աշխարհը,  
վորի ամբողջ ներքին բովանդակությունը մեղկություն ե, հեշ-  
տանք, կիրք, ցոփություն, շոայլություն և արյուն, պատրաստ-  
վում և պատերազմի նոր աշխարհի, սոցիալիստական աշխարհի  
դեմ, վորպեսզի կես ճանապարհին խեղդի այն բոլոր դյուցազ-  
նական ջանքերը, վոր մղվում են կոմունիստական իրավակարգի  
համար:

Արտաքին այդ պատերազմին ամենապողաճար անձկությամբ  
սպասում են մեր յերկրից վոնտված զանազան աղգությունն-  
ների բուրժուազիաները և նրանց կուսակցությունները — Անդր-  
կովկասում հատկապես մենշևիզմը, թրքական Մուսավաթը և Դաշ-  
նակցությունը:

Յեթե նրանք վերադառնան յերկիրը, խանգարեն մեր սոցիա-  
լիզմի կառուցումը, կլինի այն նորից, ինչ յես շատ թեթև կեր-  
պով պատկերացրի այս գրքույկում:

Իհարկե համաշխարհային կապիտալը յերբեք չի տեսնի պրո-  
լետարական մեր Միությունը իր ձեռքում, բայց զգաստ պետք ե  
լինենք:

Լինինյան սերունդից պահանջվում ե ամենից ավելի զգաս-  
տություն, լուրջ հսկողություն, մանել յերկրի ամեն մի սոցիա-  
լական ծակոտիքը և տեսնել, թե վորտեղ ե պահում իր գար-  
շելի մոռւթը դաշնակցականը, ինչ ե անում, ինչպես ե անում:

Մեր յերկրի ներսում չպետք ե գոյություն ունենա վճէ մի  
զրիմով մարդ:

Անխնա մերկացնել գրիմ կրողներին, դրանք Խորհրդային  
Միության թշնամիներն են, —և տալ նրանց արժանի հատուցումը:  
Մոսկվա, 1931 թ. հուլիս:

ՊԱՀԱՆՁԵՑ  
ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ  
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.  
ԴԻՄԵԼ Մոսկվա, Никольская, 10.  
ЦЕНТРИЗДАТ.



20 ԿՈՊ.

Цена 20 к.  
О. П. 9.



---

В. ТОТОВЕНЦ  
“Спасители” армянского  
народа — дашнаки  
(Арм. контр-рев. партия  
„Дашнакцутюн“)

---

На армянском языке